

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՀՐ. ԱՃԱԽՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍԻՏՈՒՏ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԼՈՒՄԻՆԵ ԳԵՂՂԻԻ  
ԱՐՅԱՆԻ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ԼԵԶՈՒՆ

Ժ.02.01 «ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄբ  
ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵՂՆԱԾՈՒԻ  
ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻճԱՆԻ ՀԱՅՅՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ

### **ՄԵՂՄԱԳԻՐ**

ԵՐԵՎԱՆ- 2008

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Հր. Աճայանի  
անվան լեզվի ինստիտուտի գիտական խորհրդում:

Գիտական դեկան՝

բանասիրական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր  
Լ.Շ Հովհաննիսյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բանասիրական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ  
թղթակից անդամ Ա.Ե.

Սարգսյան

Առաջատար կազմակերպություն՝

բանասիրական գիտությունների  
թեմանաժողություն Լ.Գ. Թելյան

Վանաձորի Հովհ. Թումանյանի  
անվան պետական  
մանկավարժական ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2008 թ. ապրիլ 25-ին՝ ժամը 14<sup>00</sup> -ին,  
Հր. Աճայանի անվան լեզվի ինստիտուտում գործող  
ԲՈՒՀ-ի 019 մասնագիտական խորհրդում:  
Հասցեն՝ 0015, Երևան, Գր. Լուսավորչի 15:

Ատենախոսությանը կարենի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հր. Աճայանի անվան  
լեզվի ինստիտուտի գրադարանում:

Մելիմագիրն առաքված է 2008թ. մարտի 23-ին:

Մասնագիտական խորհրդի  
գիտական քարտուղար՝

բանասիրական գիտությունների  
թեմանաժողություն Ն.Մ. Միմոնյան

## **ԱՃԱՏԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹՅԱԳԻՐԸ**

### **Ուսումնափրության թեմայի արդիականությունը:**

Ցուրաքանչյուր ժողովորի պատմության, մշակույթի, լեզվի ուսումնասիրության կարևոր աղբյուրներից մեջը բանահյուսությունն է:

Արցախի բանահյուսությունը հայ բանագիտության մեջ առանձնանում է իր որույն դերով, ազգագրական ինքնատիպ նկարագրով, հնչյունական, քնրականական ու լեզվածական առանձնահատկություններով, ճյուղապահարով, բարապահարի հնագոյն տարրերով և բաժիմաստային ոչագրավ իրողություններով: Հստ այդմ՝ Արցախի բանահյուսության լեզվաբանական բննությունը կարևորվում է ինչպես Ղարաբաղի բարբարի պատմության ուսումնասիրության տեսակներից, այնպես էլ արցախյան մշակույթի, արվածի, մտավոր ու հոգևոր արժեների ճանաչության ու զնահատության առումով: Դրանով է պայմանագրված թեմայի արդիականությունը:

**Ուսումնափրության նորույթն** այն է, որ աշխատանքն արցախահայ բանագիտության ու բարբառագիտության հետազոտական ընդհանուր դաշտում լեզվաբանական բննության առաջին փորձն է: **Արցախի բանահյուսության լեզուն Ղարաբաղի բարբառի զգրծածության անհատականացված տարրերամբն է:** Այդ հարցության վրա զուգահեռդիմ են բարբարի՝ իրեն բանագիտական իրողության և բարբարի՝ իրեն լեզվաբանական իրողության բննությունները:

Բանահյուսական ժառանգության զրագործումը բարբարին առնչվող որոշ խնդիրներ է առաջ բերում: Առաջին լեզվում կարևորվում է այն, որ բարբառային մտածողությունը բանահյուսության գոյության հիմքն ու պայմանն է, նրա էլությունը և ոչ միայն լեզվական միջոցը: Հստ այդմ է՝ բանահյուսական բոլոր նմուշները, բնագրերը չեն հավակնում լրիվ չափով արտահայտելու բարբառային, խոսվածքային առանձնահատկությունները, առաջնահերթվում է բովանդակային կողմէ: Եթերորդ դեպքում կարևորվում է լեզվական զործոնը՝ բարբար բանահյուսական մտածողության նյութական միջոցն ու դրսնորման ծեն է: Բանահյուսական յուրաքանչյուր նմուշ ի հայտ է բերում լեզվական այնպիսի իրողություններ, որոնք բնորոշ են տվյալ բարբարին ու կարևորվում են նրա պատմության համակողմանի ուսումնասիրության տեսակնետից: Այս առումով անհրաժեշտ պայման է բարբառային, խոսվածքային առանձնահատկությունների պահպանումը:

**Ուսումնափրության փաստական նյութը:** Աւելնախտությունը գրվել է Արցախի բանահյուսության՝ առ այսօր զրառված տպագիր և անտիպ (արխիվային) ստեղծագործությունների հիման վրա: Օգտագործել ենք նաև բազմաթիվ բարբառագիտական մենագրությունների, ազգագրական-բանահյուսական ուսումնասիրությունների (հայերն, ուսւերն), ինչպես նաև հայոց լեզվի զարգացման տարբեր փուլների բառամթերքն ընդգրկող բառարանների նյութերը:

**Ուսումնափրության մեթոդը:** Նյութի բննությունը կատարվել է լեզվաբանության մեջ ընդունված՝ բարբառագիտական ուսումնասիրությունների մշակած սկզբունքներով:

**Աշխատանքի տեսական և զգրծական նշանակությունը:** Ուսումնասիրության տեսական ամենակարևոր խնդիրը Արցախի բանահյուսական ժառանգության հիման վրա բանահյուսության լեզվի բննությունն է, որը, բարբառագիտական առումով կարևորվելուց զատ, ունի պատմական արժեք:

Բարբառային որոշ իրողությունների բացահայտման ու վերհանման համար բանահյուսության լեզվի հնչյունական, քնրականական, լեզվածական

առանձնահատկությունների, բառապաշարային մի շարք իրողությունների քննությունն ու վերլուծությունը զիտագրության արժեք ունի:

**Աշխատանքի փորձարկումը:** Աշխատանքի հիմնական դրույթները զեկուցումների ձևով ներկայացվել են միշտագոյացն երկու, համահայկական մեկ զիտաժողովներում: Գիտական մասնություն հրատարակվել է թեմային վերաբերող հիմք հոդված:

**Աշխատանքի կառուցվածքը:** Ատենախոսությունը բաղկացած է 122 մեքենագիր էջ կազմող հիմնական մասից (ներածություն, 4 գլուխ, եղանակացություն), բառարանից և օգտագործված գրականության ցանկից:

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀՄՄԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

**Ներածության** մեջ հիմնափրկում է ուսումնավիրվող յենմայի արդիականությունը, ուսումնասիրության փաստական նյութը, տեսական ու գործնական նշանակությունը, ուղենչփում են աշխատանքի նպատակն ու խնդիրները: Ներածությունը ներառում է նաև ամփոփ ակնարկ Արցախի բանահյուսության գրափոր կենսագրության պատմական ընթացքի, բանահյուսական ժանրերի ընդհանուր բնութագրի և բանահյուսական նմուշների գրառման առանձնահատկությունների մասին:

Ըստ լեզվի ուսումնասիրության բաժնների՝ համապատասխան գլուխներով ներկայացրել ենք բանահյուսության լեզվական ողջ նյութը:

**Առաջին զիստը՝ Ա. «Ղարաբաղի բարբառի հնյունական համակարգի արտահայտությունը՝ Արցախի բանահյուսության լեզվում» և Բ. «Արցախի բանահյուսության լեզվի բառապաշտարի առանձնահատկությունները», ներկայացրել ենք բարբառի և բանահյուսության հնյունական համակարգերի տարբերությունները, դրանք պայմանավիրող պատճառները: Բառային կազմի վերլուծությունը կատարել ենք՝ բառապաշտարը տրոհելով ծագումնաբանական և իմաստաբանական շերտների: Ըստ այդմ՝ առանձնացրել ենք որոշ ենթաշերտներ, որոնց վերլուծությամբ փորձել ենք բացահայտել այդ շերտերում ընդգրկված բառերի լեզվաբանական ու պատմագիտական արժեքը:**

**Երկրորդ զիստը՝ «Քերականական հրողությունների առանձնահատկությունները՝ բանահյուսության լեզվում»,** քննականական կառուցվածքի վերլուծությունը կատարել ենք՝ զուգահեռելով ու վերանելով գրական լեզու-բանահյուսության լեզու առնչության հարցն ու ազդեցության շրջանակները: Տրփում են նաև վիճակաբական որոշ տվյալներ, որոնք հստակորեն արտացոլում են բանահյուսական ստեղծագործությունների ընթացքամեջ կառուցվածքի առանձնահատկությունները:

**Երրորդ զիստը՝ «Բանահյուսության լեզվի ոճական առանձնահատկությունները»,** ոճաբանական համակարգի առանձնահատկությունները քննել ենք՝ լրացնելով ծանրատեսակների՝ վերհաճախով նրանցում ոճական հնարանքների դրսորման առանձնահատկությունները:

**Չորրորդ զիստը՝ «Գրականացումը բանահյուսության մեջ»,** ամփոփ ներկայացրել ենք լեզվական բոլոր մակարդակներում դրսորվող գրականացման դեպքերը, փորձել ենք տալ այդ բառաշերտի լեզվական արժեքը, որոշել դրան նպաստող ու այդ գործնթագր խթանող գործները, պայմաններն ու պատճառները:

**Եղրակացության** մեջ ամփոփել ենք աշխատանքի հիմնական արդյունքները, համակարգել ու ձևակերպել ենք կարևորագույն դրույթները:

## ԳԼՈՒԽ I

## **Ա. ՂԱՐԱԲԱԴԻ ԲԱՐԲԱԾԻ ՀՆՁՅՈՒՆԱԿԱՆ ՀԱՄԱՎԱՐԳԻ ԱՐՏԱՀԱՅԱՀՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽ ԲԱՆԱՀՅՈՒԹՅԱՆ ԼԵԶՎՈՒՄ**

Արցակի բանահյուսության հնչյունական համակարգը ընդիանուր առմամբ համընկնում է Ղարաբաղի բարբառի հնչյունական համակարգին: Առկա տարբերությունները ոչ ճիշտ տառադարձության հետևանք են:

Ղարաբաղի բարբառի **69** հնչյուններից<sup>1</sup> բանահյուսության լեզվում առկա են **51-ը՝** *ա, ա, բ, պ, գ, զ'*, *դ, դ', զ, զ', է, ը, թ, թ', ժ, ժ', ծ, ծ', կ, կ', հ, հ', ծ, ծ', ո, օ,* **7** *ն, շ, չ, պ, ջ, ջ', ռ, ս, ս', վ, տ, ր, ց, ց', ու, փ, ք, ք', օ, օ', ուա, ֆ,* **15** *երկրարբառակերպ ծայնավորներից՝ 2-ը՝ թ', թ', որոշ բառերում նաև՝ թ'', 13-ը՝ այ, էյ, իյ, յա, յէ, յը, յի, յո, օյ, ոյ, ոյ, օյ (այ, օյ երկինչյունների գործածության դեպքեր բանահյուսական նմուշներում չեն հանդիպում):*

Նշված բոլոր հնչյուններն ունեն հնչույթային արժեք՝ բացառությամբ բայց ազատ սուլավանների, շշականների և առաջնալեզվային պայթականների, որոնք հանդիս են զայխ միայն որոշակի դիրքերում՝ **ն, թ** բաղաձայններից հետո, բայց ազատ ծայնավորներից առաջ:

Չայնավոր հնչյունների արտաքինությունը գրեթե չի տարբերվում գրական հայերենի համապատասխան հնչյունների արտաքինությունից. բայց ին ծայնավորները բարձրացման աստիճաններով համընկնում են իրենց լուրդ հնչույթներին, իսկ արտասանության տեղով՝ տարբերվում:

Քաղածայնական համակարգը երկաստիճան ծայնեղագորիկ է. ծայնեղ պայթականները հանդիս են զայխ փոխադրյա բառերում և ռնգայիններից հետո: Առկա շնորհմները պայմանավորված են բանահավաքի միջամտությամբ:

## **Բ. ԱՐՑԱԽ ԲԱՆԱՀՅՈՒԹՅՈՒՆԸ ԼԵԶՎԻ ԲԱՌԱՊԱԾԱՐԻ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Արցակի բանահյուսության լեզվի բառապաշտիքը քննությունը կարևորվում է Ղարաբաղի բարբառի պատմության ուսումնասիրության տեսակենտից: Ղարաբաղի բարբառի բառապաշտիքը դեռևս համակողմանիորեն ուսումնապիրված չէ, և բանահյուսության լեզվի բառապաշտիքը մի շարք իրողությունների քննությունն ու վերլուծությունը ևս մի փոքր է բարբառային որոշ երևույթների բացահայտման ու վերհանման համար:

Բանահյուսության լեզվի բառապաշտիքը ուսումնասիրության համար ուշադրություն ենք դարձել բառերի ծագումնաբանական և իմաստաբանական վերլուծություններին՝ կարևորենվ այդ շնորհմում ընդորկված բառերի լեզվաբանական ու պատմագիտական արժեքը:

## **ԲԱՆԱՀՅՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՌԱՊԱԾԱՐԻ ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆԱԿԱՆ ԾԵՐՏԵՐԸ**

Բանահյուսության բառապաշտիքը ծագումնաբանական շնորհ դասակարգել ենք բնիկ բառեր, փոխառություններ, օտարարտնություններ մասնաշերտեր:

**1. Բնիկ հայերեն բառերը** բառապաշտիքի հնագույն տարբերից են և կազմում են բանահյուսության հիմնական բառապաշտիքը միջուկը: Ըստ Հր. Աճաղյանի

<sup>1</sup> Դավթյան կ.ս., Լեռնային Ղարաբաղի բարբառային բարտեզ, Ե., 1966, էջ 20:

«Հայերեն արմատական բառարանի» տվյալների<sup>2</sup> գրական հայերենում հնդիքոպական ծագում ունեցող արմատների թիվը հասնում է 927-ի, որնցից, ըստ մեր հաշվումների, մոտ 457-ը գործուն է բանահյուսության լեզվում (բարբառում): Վերջին շրջանում Էդ. Աղայանի, Գ. Զահորյանի, Ալ. Մարգարյանի, Լ. Հովհաննիսյանի և այլոց կատարած լեզվաբանական ստուգաբանությունները համարել են հնդիքոպական ծագում ունեցող բառերի շարքը մոտ 450-ով: Ընդ որում՝ դրանցից մոտ 200-ը Ղարաբաղի բարբառի բառապաշտարի միավորներ են:

Այդ շերտում կարելի է առանձնացնել մի քանի մասնաշերտեր.

ա. Գրաբարում չափանիված, բայց բարբառում առկա հնդիքոպական արմատներ. Գ. Զահորյանը նշում է, որ «ասկավ են բարբառների պահպանած հնդիքոպական այն արմատական ձևերը, որոնք բացակայում են հայերենի հուշարձաններում»<sup>3</sup>: Պատմագիտական ու լեզվաբանական առումով դրանք լուրջ նշանակություն ունեն և առանձնահաստոկ են դրանում Ղարաբաղի բարբառի բառապաշտարում: Դրանցից են՝ **ապի(պիո), առու(սաստկալան իմաստով), զգ-ը րզիլ, բուլ-պածօլ, բուքի-պածօլի, զաղել-կ'եղէլ, դմբոց-դրմիօց, դնզել-տրմբրդէլ, թալ(մի տեսակ բանցար), թիթենն-թիթիրմատի, թնալ-թրնգթրնգատի, թռնթռորալ-թռնթօրարի, թօռ(անձրև), լակ(թույլ, փշացած ձու), լամփա-լամփուշ, լասպուտ, լաւ-լավ(հեղեղ), լինալ-լածի, լականի-լրպրզուտի, լոր տարի, կարտանչել-կրտանչի, կլմբոս-կըլըմբօզ, կլոնճ-կլոնճի, կուխու-կրտէտ, կուլ-կոլ տարի, մալանչ(բրդի փայթի), մամ, մլուկ-մլաք, մլուրմօզ(ցեղ), մուգ-մօք, մօլ(ժուկ), շիլ-շէվ, նան-նան, շեր-շեր, շիլ-շիլ, շիպ-շիպը, շիվ-շէվ, պալոկնի-պայոկէլի, պարպատի, սամի-սամի, սրկըթի(սամի), սալուլ(սալոր), ցէր-ցիթ, ցէր-ցիթո, ցինալ-ցրլի՛փ, ցրլի՛փ, փմկնին-փինինինուտի, փիփինրու-փիփրփուտ-փաճճփածու և այլն»:**

Լ. Հովհաննիսյանը հնդիքոպական ծագում ենթադրող բառերի ցանկը մեծացնում է՝ <sup>4</sup>զի, զօն, լիթէլի, լսդրոլոկ, ծօնը կէփ, կօռնը, հ<sup>5</sup>սի, չտալ անէլ/առէլ, պիլէ, պրոլոր, սրլէթառ, սիլտ, տիբ<sup>6</sup>նիլի բառերով<sup>4</sup>:

բ. Բառեր, որոնք, ըստ լեզվաբանների ենթադրությունների, ծագումով ավելի հին են, քան գրաբարյան ձևերը՝ **ալւոր-երլէվուր, անիծ-համէծ, արքենալ-հ<sup>7</sup>բիիլ, երի-հերէլ, որ-հօր, ով-հու, երդիկ-հածըթ, երանի-երներակ, անցանել-երնցընէլ, երր-երի, ինչ-ինչ, երինց-հերէնջ, որոր-հածլնը, եռոր-հօրթ(վրերթ)** և այլն: Նման ենթադրության հիմք է տալիս **հ** նախահավելվածի առկայությունը, որն ունեն նաև նախալեզվան համապատասխան բառերը<sup>5</sup>: Էդ. Աղայանը նշում է, որ «բարբառային ձևերի նախահամուն հ-ն հնուազա հավելում չէ, այլ նախական հ-ի պահպանումը»<sup>6</sup>: Իսկ Տ. Մուրադյանը գրում է. «Պնտը է կարծել, որ հայերենի նախապատմության ինչ-որ շրջանում արևելյան տարածքի բարբառներում բառակզբի ձայնափորից առաջ եղել է խոլ հ-ի հավելման մի որոշակի միտում, որը հետագա զարգացում է ապրել սահմանափակ տարածքում»<sup>7</sup>:

<sup>2</sup> Աճաղյան Հ.Հ., Հայերեն արմատական բառարան, 1-4, Ե., 1971-1979:

<sup>3</sup> Զահորյան Գ.Բ., Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987,էջ 274:

<sup>4</sup> Հովհաննիսյան Լ.Ը, Մի քանի նկատություններ հայերենի իրանական փոխառությունների տարբերակման վերաբերյալ, ԲԲՀ, հ.2, Ե., 1984, էջ 116:

<sup>5</sup> Աճաղյան Հ.Հ., Հայոց լեզվի պատմություն, Հ. 1, Ե., 1940, էջ 119-122:

<sup>6</sup> Աղայան Հ.Բ., Բառարձնություն և ստուգաբանություն, ՊԲՀ, հ.2, Ե., 1973, էջ 23:

<sup>7</sup> Մուրադյան Տ.Կ., Հայոց լեզվի պատմական թիվականություն, Ե., 1982, էջ 319:

Առանց նախաձայն հիմքի դիմաց՝ և ունեն՝ **առդ-հանդ, նոսլ-կրէսլ, ոսիկ-իրլէ, ուղուկ-կրլոկ, ոսի-հօսի, աներ-հանէր, ոջի-հաջած**՝ բարերում։ Բայց հով բարբառային ոչ բոլոր ձևերն են, որ ավելի հին են։ Այս խմբի մեջ ներկայացրն ենք հնագոյն ձևերը։

զ. Բառեր, որոնք գրաբարում չունեին և հավելվածը, բայց բարբառում ունեն՝ **քժիծ-պտէզնը, բոռ-պնունը, խնզ-խէզնը, սինծ-սիշնը, անտամ-անթէմնը, բորբոս-վորփէշնը, բոխնչ-վոտչնը, խնծ-խէծնը, համկ-հակնը, մամուս-մամէռնը, զորս-կէռթնոկ** և այլն։ Լ. Հովհաննիսյանը այդ կապակցությամբ գրում է. «Բարբառում նկատվող այս երևույթը ոչ թե բարբառային նորամուծություն է, այլ հնուց ենող նորամուծության օրինաչափության արտահայտություն։ Հնարաբոր է նաև, որ բարբառներում և ունեցող որոշ բառեր, որոնք գրաբարը պահել է առանց ն-ի, իրենցից ներկայացնում են հայերենի տվյալ բառի ավելի հնագոյն տարբերակը, որը գրաբարը չի պահել»<sup>8</sup>։

դ. Գրաբարյան արմատական ձևեր, որոնք բարբառում հանդեն են զայիս բաղադրյալ կազմությունների մեջ՝ **աղի-կրիկուր, այրի-կրիկուրի, այզ-ինքնավլէդ, դեղ-կինքեղնը, զազու-կըլսորիօսնը, թիթենոն-քիթիրմաղ, թեղոք-պղինկաթէդ, տղկաթէր, այլ-չնը, արեզ-կրիկնակ, զիլ-կրուրէ** և այլն։

ե. Գրաբարյան բաղադրյալ կազմություններ, որոնք բարբառում հանդեն են զայիս արմատական ձևերով՝ **սարբայ-բռի, սարիկ-սարդ-սար(էլ), եղուզ-հօլ, ճառագայթ-ճռաքը(իլ), ճմլել-ճըն(էլ), շուրջ-շուր, պնազէն-պէն, զգնստ-զգնսուլ-կէն(ալ)** և այլն։

զ. Բառեր, որոնք գործածվում եին հին հայերենում, ունեն նրանից տարբերվող հնյունակազմություն և պահպանվում են թիշ թփով բարբառներում, այդ թփում նաև Ղարաբաղի բարբառում՝ **կածն տալ-կրակը բորբոն, հափառ, քիշկայ, ցիկոս(ցայթ+ուս), կրզնրկէլ, քօնթակ կ'ալ, հարուլ-հարու տալ(պրզահարեն), լիսալ-լոսկէլ**, **բոր-պէրփէլ, կրծել-կօրծէլ, կաղին-տրկողէն, շեղ-շաղկէլ, շնշու-շնշու, մնտ-ծուռ** և այլն։

2. Բանահյուսության լեզվի բառային կազմում մի մեծ խումբ են կազմում **փոխառությունները**, որոնք բարբարին են անցել անմիջապես փոխառու լեզվից։ Բառերի այդ շարքը իր մեջ ընդգրկում է արաբական, պարսկական, թուրքական, ուսական փոխառությունները։ Բանահյուսության լեզվի բառապաշտում դրանք հաճախական կիրառությամբ կայունացել են, որի արդյունքում մայրենի բարբառի համապատասխան միավորը, շատ հաճախ կորցնելով գործառական ակտիվությունը, դառնում է սակավ գործածական կամ պարզապես արտադիմում է։

Ըստ Ար. Սարգսյանի «Ղարաբաղի բարբառի բացատրական բառարանի» տվյալների<sup>9</sup>, արևելյան լեզուներից կատարած փոխառությունների թիվը բարբառում (նաև բանահյուսության լեզվի բառապաշտում) հասնում է մոտ 3000-ի։ Ի հակադրություն դրա՝ **լուսերենից փոխայտայ բառնը** բանահյուսության բառապաշտում մեծ թիվ չեն կազմում և չունեն գործառական նույն ակտիվությունը։ Բարբառում դրանց թիվը հասնում է մոտ 1500-ի<sup>10</sup>, իսկ բանահյուսական ստունդագործություններում այն չի անցնում 500-ից։ Փոխառությունների ներգործությունը մեծանում է, նրբ նվազում է

<sup>8</sup> Հովհաննիսյան Լ.Ծ., Գրաբարի և Ղարաբաղի բարբառի առնչության հարցի շուրջ, ՊԲՀ, հ.1, Ե., 1977, էջ 141։

<sup>9</sup> Սարգսյան Ա. Յու., Ղարաբաղի բարբառի բացատրական բառարան/Ճնուագիր/։

<sup>10</sup> Տե՛ս նոյնին։

անտական լեզվի ազդեցությունը, տվյալ դեպքում՝ գրական հայերենի: Դրան նպաստում են ամենից առաջ պատմահասարակական պայմանները: Այսօր փոխառությունների գործածությունն աստիճանաբար սահմանափակվում է. դրանք այլև դադարում են կենտրոնակ լինելուց: Եվ հակառակ՝ բարեառ, բանահյուսության լեզու մուտք գործած ներքին ոչ միջնորդական փոխառությունները, որոնք առաջացնել են հայերենի արևելահայ գրական տարբերակի ներգործման և մշշբարբառային ազդեցությունների հետուանրով, ավելի գործոն ու կենտրոնակ են դառնում՝ պայմանափորված արդի գրական հայերենի ակտիվ ներգործությամբ:

3. Բանահյուսության բառապաշարում լեզվական ու ոճական առումներով կարևորվում են այն փոխառությունները, որոնք փոխառու լեզվից նոյնությամբ մեջբերված են խորի մեջ: Այդ կարգի բառերը չեն ծովական մեր բառապաշարին և իրենց ձևախմբային հատկանիշներով համարվում են օտարածին բառեր՝ օտարաբառնություններ: Օրինակ՝ Խորվածից մի կտոր էլ թուրքն առողում ա հայի-մայի կտորում: Շատ լավն էր: -Այ էրմանի, բռ անքիզա շեյ գը<sup>11</sup>: Թուրքն առում ա էրմանի գեյիր՝ նա շիշ յանարի, նա քարաբը<sup>12</sup>:

Գերեթե բոլոր օրինակները փոխառու ժողովրդի բանահյուսական նմուշներ են՝ առածներ, թևավոր խորեն, դարձվածքներ: Արցախի բանահյուսության լեզվում այդպիսի գործածություններ աւակախենավ են, բայց կարևորվում են տվյալ ժողովորդների լեզվի ու մշակույթի, նրանց ապրած հասարակական ու տնտեսական պայմանների ուսումնափորւթյան տեսակետից:

## ԲԱՌԻՄԱՍՏԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱԿԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐՑԱԽԻ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ԲԱՌԱՄՊԱՇԱՐՈՒՄ

Բանահյուսության բառապաշարը հատկանշվում է բառիմաստային հետաքրքիր իրողություններով, որոնք բնութագրում են բառապաշարի պատմական գարգացման ընթացքը: Այդ բառաշերտի վերլուծությունը հնարավորություն է տալիս բացահայտելու բարբառի, բանահյուսության լեզվի բառապաշարի իմաստափոխական տեղաշարժների, բառապաշարի իմաստաբանական համակարգի գարգացման ընթացքի որոշ նրանություններ:

Առանձնացնել ենք բառիմաստային որոշ ներթափակչեր:

1. Քնիկ հայերեն բառեր, որոնք բանահյուսական ստեղծագործություններում իմաստափոխական ուշագրավ առանձնահասարկություններ են դրսերում՝ հանդես գալով ինչպես գրաբայան, այնպես էլ նրանից տարբերվող նշանակությամբ, երեսն էլ միայն փոխարժեական գործածություններում պահպանելով գրաբայան իմաստը (բառերի բազասորությունը տրփիմ է ըստ Հր. Աճայանի «Հայերեն արմատական բառարան»):

Քննենք որոշ բառեր:

**Քառ>պար** բառը բառով բանահյուսական ստեղծագործություններում իր հիմնական՝ «լսուք» նշանակությամբ թիշ է գործածվում: Այն փոխարժեաբար ստացնել է «վերաբերմունք» նշանակությունը և հաճախական կիրառություն ունի այդ իմաստով:

**Գերբեմել>ղորփիլ՝** բառը «կործանման», «կորոպանման» իմաստով գործածական է վեր ղորփիլ՝, ղորփած պիրիլ՝ հարադրություններում, բայց ավելի հաճախական է

<sup>11</sup> Հարությունյան Լ. հ., Նշանակությամբ Արցախի բանահյուսության, գիրք II, Ստենի., 2004, էջ 88:

<sup>12</sup> Տե՛ս նոյնու:

մասնավորված՝ «պինդ-պինդ քորել, պոկելով, ցավեցնելով քորել» իմաստով կիրառությունը:

**Գիր>կիր**-ը բանահյուսության մեջ պահպանել է «տառ գրություն» իմաստը, նաև տարածված է «կախարդանք, ճակատազիր» իմաստով գործածությունը:

**Դաշնապ>տղենաթ** բառը գործածական է նաև «կառտաղել» իմաստով: Հր. Աճայանը այդ բառի արմատը համարում է դաշնալ-ը՝ «կծված, խայթված» իմաստով, «որ սակայն դաշնապ բայի մի նոր իմաստն է ներկայացնում»<sup>13</sup>, ըստ որում Հր. Աճայանը բացառում է այդ երկու բառների միջև եղած ընթանրությունը: Իսկ Ար. Մարգարյանը նշում է, որ դաշնալ-ը «դաշնապ բայի անցյալ դերքայն է, որ գրաբարից մասամբ խոտորվելով դարձեալ-ի փոխարեն արտահայտվել է դաշնապ ծևոփ»<sup>14</sup>: Բայն իմաստային աղերս ունի տղեն բառի հետ. տղեն նշանակում է «կապ, չփառ», որից էլ տղենիլ «չփառով կապվել»: Սա կարող է հիմք տալ կարծելու, որ նրանք միևնույն ծագումն ունեն: Ըստ Էդ. Աղայանի՝ տղեն-ը «ծագում է \*der արմատից և նշանակում էր «կաշին բնրթել, ճնորթել»: Հայերենը ծագում է \*dor ձևից: Տղեն նախապնդական նշանակել էր «կաշին պարան, փոկ»<sup>15</sup>: Մենք հակված ենք կարծելու, որ տղենաթ-ը դաշնապ բայն է, իսկ «կատաղած» իմաստը փոխարեական գործածությամբ առաջացած իմաստ է, որն արդեն գիտակցիում է իրեն բատիմասի փոփոխության արտահայտություն:

**Ե(ներսից դորս զայր)** բառը բարբառում ունի «եռայրվ թափվել» իմաստը՝ իլլէր, որից էլ տառաջազնի է «յցվել, թափվել» ընդհանրական փոխարեական նշանակությունը:

**Եռ** (եռալ, ենկոյի) բառի վերաբերյալ Աճայանը տարբերում է 2 խումբ՝ **Եռ և հեռ**: Առաջին խմբի մեջ մտնում են այն բառներ, որոնք ունեն «կոյիվ», «քարկույթուճ», «տիա», «ճախսաճ» նշանակությունները, իսկ երկրորդ խմբի մեջ՝ «շարժի», «երերալ, տատանի», «սիսալի» նշանակությամբ բառները: «Ղարաբաղի բարբառում եռալ բառը հեռալ ձևն ունի, ինչ որ ապացուանում է եռ և հեռ արմատների նույնությունը»<sup>16</sup>:

**Հնտերն>հեղնդրել**<sup>17</sup> բառը պահպանել է «յափազմյը ընտրել» իմաստը և բարիմաստի նեղացումով ձեռք բնրել «հասիկների, կանաչեղենի միջից կնդտի հետացում» նշանակությունը: Առավել հաճախական գործածիում է վերջին նշանակությամբ: Բանահյուսության լեզվում փոխարեական կիրառությամբ է ստանում գրաբարյան իմաստը:

**Թան-ը «ապոր»** նշանակությամբ բանահյուսական ստեղծագործություններում չի գործածիում, այն ունի «ըմպելիք» իմաստը: «Ապոր» իմաստով գործածիում է **թան** բառի գործիական հելովաճակը՝ **թանապ-ը** (թանով, թանից պատրաստված ապոր): Որոշ դարձվածներում **թան-**ը պահպանել է «ապոր» նշանակությունը, ինչպես՝ թան ծամէլ, թան ծրմէլ՝ թանզնէլ, թանէն թթօթ սամէլ (վերջինում կարող է գիտակցին և՝ որպես ապոր, և՝ որպես ըմպելիք) և այլն:

**Լանջ>լ՞նջ-լէնջ** բառ «կործք» իմաստով սակավ գործածություն ունի: «Լեռան լանջ, գոր» իմաստով կիրառությունն ավելի հաճախական է:

Բանահյուսության մեջ **կայծ** բառի փոխարեն «կրակի կայծ» նշանակությամբ գործածիում է **պած**<sup>18</sup> բառը, իսկ **կած**<sup>19</sup> նշանակում է «շող, շատ տաք»:

<sup>13</sup> Աճայան Հ.Հ., Հայերեն արմատական բառարան, հտ. 2, Ե., 1973, էջ 413:

<sup>14</sup> Մարգարյան Ա.Ա., Բարեառային մի բանի բառների ծագման մասին, ԲԵՀ, հ.2, Ե., 1972, էջ 240:

<sup>15</sup> Աճայան Հ.Հ., Նոր սոուզաբանություններ, ՊԲՀ, հ.4, Ե., 1967, էջ 32:

<sup>16</sup> Աճայան Հ.Հ., նշված աշխատությունը, էջ 29:

**Ծաղել** բառը «շփոթուի, սխալիի» իմաստով պահպանվել է և ածանցով կազմության մեջ՝ **շաղվել**: **Ծաղել**՝ ձևով ունի «կայթ կտրվել» իմաստը:

**Պատոկ>պրոտօկ** բառը «ծիլ, բողոք» նշանակությամբ կիրառվում է բանահյուսական ստեղծագործույթուններում: Բայց իհմնականում գործածական է «զագաթ, կատար» իմաստով: Հաճախական է նաև **պրոտօկ** արմատից կազմված **պրոտել**՝ բայի «ծաղել, ծնունդ առնել» իմաստով կիրառվածություն:

**Պոտ>պածտ-ը** բացատրվում է՝ «այսումն փոքրիկ ի վերայ մորթոյ(իմարչշտիկ)»<sup>17</sup>: Սույն բառահյուքածի զավառական տարբերակներում Ղարաբաղի բարբառի համար նշված է՝ «մեղրով, դրշաբռվ կամ տոպռվ շաղախված և գունդգունդ չորացրած փոխինդ (մի բռունգի մեծովյամբ)»<sup>18</sup>: Բայի այդ իմաստով գործածույթան հանդիպում ենք բանահյուսական նմուշներում: Ինչպես՝ **Պածտ ալ ըրալ, սինումը շարալ**: Բարիմաստը ընդուանվել է կցորդության հիմունքով պրոտ են անվանում հացը՝ կրողած պանրով, և, ընդհանրապես, այն նշանակում է նաև «կրողած պատառ», իսկ **պածտիլ**՝ «կրողով փաթաթել»:

**Տամուկ->տամկանալ>տղմկել**<sup>19</sup> բառը «խոնավանալ» իմաստով սակավ գործածական է, բարբառում լայն կիրառում ունի «փափկել, կակեն» և փոխարենական «մերծիմահ» նշանակություններով:

**Օթ>նրի (զիշեր)** բառը բարբառում գործածվում է «խափար, մոլո» նշանակություններով: Փոխարենաբար ստացել է նաև «խոժոռ» իմաստը, որի գործածույթան հաճախականությունն ավելի մեծ է: Համանուն **օթ** բառը ունի «հագուստ» նշանակությունը, բայց բանահյուսական ստեղծագործույթուններում այդ կիրառությամբ չենք հանդիպն:

Բարիմաստային այս խմբի մեջ կարելի է ներկայացնել հնագույն այն փոխառությունները, որոնք պահպանում են գրաբարյան բարիմաստը և ունեն նրանից տարբերվող նշանակություն:

**Ժիժի>ժիճի** (ծաղու) բառը ունի և «ճարու» իմաստը, և «շատախոս» հատկանշային իմաստը: **Ժիժի** ձևով պահպանված է **ժիժիպասպա** բառում, որ նշանակում է «ծամածություն, շաղակրատանք՝ ծամածություններով»:

**Խոտոր>խոտուրու** բառը գործածվում է «դատարկ, անտեղի, անսպիտան» նշանակություններով:

**Կտրկափ>կորկուփ** (թերանը պասպանձուած) բառը բարբառում գործածվում է հարադրության մեջ՝ **կորկուփ կվալ**, և ունի «սակվել, պատպանձվել, լիզուն թերանուս շրանար» իմաստը: Գործածական է նաև դրանից կազմված **կորկուփել**՝ բայց՝ **կորկուփ կվալ** հարադրությունն ունի «շորանար» ընդհանուր իմաստով գործածությունը:

**Պարտագ>երգարան** բառը բանահյուսական նմուշներում կիրառվում է «անցործություն» նշանակությամբ: Այդ բառից կազմված **երգարանել**՝ բայց ունի հակառակ իմաստով կիրառություն:

**Վեթեն>վրեխ** բայի «րգեզ» իմաստը պահպանվել է բանահյուսության մեջ: Բայիմաստի ընդլայնումով այն ստացել է նաև «վայսկոտ, երկոտ» նշանակություն:

**Քաջ-ը >լավ, ընտիր** գրաբարյան իմաստով բարբառում չի գործածվում: Հոգնակի կազմություն՝ **քաջը>քաշի**, բարբառում «սառանա, դև» նաև «այսանդակ, զարհուրելի» իմաստներով գործածությունը սովորական է: Բանահյուսական

<sup>17</sup> Աճաղյան ՀՀ, Հայերեն արմատական բառարան, հ. 4, Ե., 1973, էջ 103:  
<sup>18</sup> ՏԵ՛ս նոյցն:

ստեղծագործություններում սակավադին է քաջ բառ՝ «աղի, խիզախ» իմաստով կիրառությունը: Առկա դեպքերը գրական լեզվի ազդեցության հետևանք են:

2.Բանահյուսական ստեղծագործություններում իմաստափոխսական հետաքրքիր իրողություններ են դրսերում գրաբարում չլիայված հնդեվրոպական որոշ արմատներ, ինչպիսիք են՝ կմբոս (Կոլոմբօ), Փմփլսի (Փինփինօտէ՛/Փիլխափիսոտէ՛) Լեպ(լը՛պ), Լելալ (լած):

Կլմբոս-ը Գ.Զահոնկյանը ներկայացնում է բարբառային բառերի շարքում «Անձատուն» նշանակությամբ<sup>19</sup>: Բանահյուսական նմուշներում այն գործածիւմ է «շատ մեծ, խոշոր» իմաստով: Խոսակցական լեզվում, հատկապես վաղ սերնդի ներկայացուցիչների խոսքում, այն իր բուն նշանակությամբ նոյնական գործածիւմ է:

Փմփլսի-ը (Խմերի բարձրանալը) բարբառում ունի փինփինօտէ՛ և Փիլխափիսոտէ՛ տարբերակները: Առաջինն ունի «փափկել, գիրանալ», իսկ երկրորդը՝ «ուշել» իմաստները:

Լեպ (լը՛պ)՝ «լեզվի վրայի դիրո» նշանակությամբ բանահյուսական նմուշներում գրեթե չի գործածիւմ: Առավել տարածված է «ջրայի ցեխ» նշանակությամբ կրտսելությունը:

Լելալ՝ (Երերայ) բառն իմաստափոխվել է. լած կրտել՝ հարադրության մեջ կցորդության հիմններով ստացել է «լիստ հարած» իմաստը:

3.Ծագումով փոխառյալ մի շաբթ բառն բարբառում, բանահյուսական նմուշներում գործածիւմ են փոխառու լեզվում ունեցած բառիմաստից տարբերվող իմաստով: Բոլոր բառերին, բնականաբար, չենք անդրադառնում, բնորում ենք մի բառի բնորոշ օրինակներ:

Դամ-ը պահավանենից կատարված հնագոյն փոխառություն է և թարգմանաբար նշանակում է՝ «Երգի ճայնակցություն», բարբառում այն իմաստափոխվել է, ծերք բնիք առավել ընդհանուր իմաստ՝ «կողմնակցել, աջակցել»: Դամ բառից կազմված դամ դրնել՝ հարադրությունը ունի «յայ նիփած լինելու աստիճան» նշանակությունը: Երտամակ-ը պահավանեն նշանակում էր «բազմություն, խումբ (մարդոյ, կենդանիների, ձիերի)», գրական հայերենում բառիմաստը ներացվել է, և Երտամակ անվանում են միայն ձիերի խումբը: Բարբառում այն նշված իմաստով չի գործածիւմ, համեն է զալիս բարբառայան մեջ՝ իբրև հնգամական արտահայտություն՝ բրամակ ընցընել, և նշանակում է «մարդաշաբք ընկնել, հայտնի մարդ դառնալ»: Ալ. Մարգարյանը բրամակը կապում է «ոչ թե երամակ, այլ հրաման բառի երտամակ հոգնակի ձևի հետ և կապվում ու սերփում է ուղղակի հրամանը ընկնել հարադրությունից»<sup>20</sup>: Լ. Հովհաննիսյանը համոզիչ չի համարում Ալ. Մարգարյանի փաստարկները՝ նշելով «իրանական բառ արմատը ունեցել է (գուցե և նախնական) «մարդկանց խումբ, մարդկանց բազմություն» իմաստը (որից հայերենում՝ ուսմիկ): այդ նոյն արմատից երտամ, երտամակ կազմություններն ել ունեն «մարդկանց բազմություն իմաստ»... Ուրին հաշվի առնելով բառ արմատի և նրամից կազմված ձևերում «մարդկանց խումբ», «շաբք» իմաստը՝ համապատասխան բրամակ ընգնել հարադրության մեջ էլ պետք է տեսնել նոյն արմատը»<sup>21</sup>: Նոյն բառի հնցյունափոխված «ըրմակէն» ձևը նրբիմաստային տարբերություն ունի և նշանակում է «կարգին, կիրթ»:

<sup>19</sup> Զահոնկյան Գ.Բ., Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972, էջ 10:

<sup>20</sup> Մարգարյան Ա.Ս., Սոտուգարանական մեկնարկություններ, ԲԵՀ, հ.2, Ե., 1992, էջ 124:

<sup>21</sup> Հովհաննիսյան Լ.Ճ., Հայ-իրանական նոր ստուգարանություններ, Ե., 2005, էջ 28:

Պարսկերնն լար>լանք բառը «շոր, զգնասի՝ շորի կտոր» նշանակությամբ իմաստափոխվել է, և ստացել «հինշոր» իմաստը:

Հաղավ> փոխսատու լեզվի (ասորական) «զգնաս» իմաստը պահպանել է, բայց առավել տարածված է «ներքնազգեսու»՝ նեղ իմաստով կիրառություն:

Հարիֆ> հ<sup>Յ</sup>րիփ բառը արաբերնն նշանակում էր «ընկեր»: Նույն իմաստով չի պահպանվել: Բարբառում ունի բացասական նրանց և զիտակցվում է որպես վիրապիրական բառ, առանձնապես խոսկցական լեզվում, թեպետ որոշ կիրառություններում «ընկեր» իմաստի հետ կազմ դնեն նկատնի է:

Մանդիլ>մ<sup>Յ</sup>նդիլ-ը (հոն.) «կնգոր, զլիի թաշկինակ» նշանակությամբ բարբառում չի կիրառվում, այն իմաստափոխվել է, և ունի՝ «շատ բարակ» ու «սարդոստայնի թեր» նշանակությունները:

Փոշի>փոշի-ն բարբառում չի պահպանել փոխսատու լեզվի (կրվկայան) «թօօց» նշանակությունը, այլ գործածվում է ավելի մասնավոր, նեղ իմաստով՝ «այցորի փորր բանակր»:

Քափիար>քափիար-ը (պիլ.) «բորենի» նշանակությամբ բարբառում չի գործածվում: Այն ստացել է «տղեղ, ծեր» (ջադրու) իմաստները և ունի ընդգծված բացասական նրանք: Սյժմ արաջնային իմաստը «ծեր»-ն է:

Քեմոնխատ>քեմոնխատ պահիավերնն նշանակում է «ողբրկեալ կաշի՝ գրի կազմի համար»: Բարբառում բարիմաստը մասնավորվել է, ստացել «զլիի մաշկից պրկված թենի» իմաստը և հաճախական կիրառություն ունի այդ նշանակությամբ:

4. Մի շաբ բառեր բարբառում պահպանել են իրենց բուն նշանակությունը և հանդես են զախս նաև այլ իմաստներով:

Խալաք բառը «ընծա, նկեր» իմաստին զուգահեռ ունի «երկար զգնատ, հազուստ» նշանակությունը:

Գոզ>գ<sup>Յ</sup>ձրգ- կ<sup>Յ</sup>օր բառը ունի «զոզ, զիրկ» նշանակությունը: Գործածվում է նաև չափի իմաստով:

Իմաստային այդ խմբի մեջ է մտնում տաքրանք բառը, որն ունի «ինչք, կայր» նշանակությունը: Հաճախական է նաև «անսատուն» իմաստով կիրառություն:

Լական>լ<sup>Յ</sup>գան-ը գործածվում է «կոնք» և «մեծ, լայն աման» նշանակություններով:

Երբեմն էլ այդ բառերի տարբեր իմաստներն այնքան են հեռանում, որ խզիում է նրանց իմաստային անմիջական կապը, և միշտ չէ, որ հստակերեն հնարավոր է լինում որոշելի տվյալ բարի՝ բազմիմաստ կամ համանուն լինելը: Օրինակ՝ փոքր բարի «ծայք, ողբր» և «արատ, թերություն» իմաստները: Կամ կեց>կըթ բարի «անսատուններից ստացված արդյունք» կաթ, ծու, կարազ և այլն» և «կաթիլ (ժլրկըլեր)» իմաստները: Նույնն է նաև մայստ բարի «պանքի մակարդ» և «նյութ, դրամագոլիս, որշակի պահք» նշանակությունները:

## ԾՈՄԱՆԻՇՈՒԹՅՈՒՆՆԸ ԲԱՆԱՀՅՈՒՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Բանահյուսության լեզվի բառապաշարային, իմաստաբանական մի շաբը առանձնահաստկությունների վերհանման համար կարևորվում է հաճախական կիրառություն ունեցող փոխադարձ-մայրենի միավոր հակադրությամբ հոմանշային զոյցերի քննությունը, որի վերլուծությունը հնարավորություն է տախս բացահայտելու հոմանիշ փոխադարձ միավորի լեզվական արժեքը, պարզելու նրա նախընտրելիության աստիճանը մայրենի միավորի համեմատությամբ, որին և ներկայացնելու բանահյուսության լեզվում տվյալ բառաշերտի լեզվական արժեքը:

Հստ մայրենի և փոխառյալ միավորի իմաստային հարաբերակցության ու գործառական հաճախականության՝ կարենի է առանձնազննել որոշ խմբներ.

ա) *Մայրենի լեզվում գործածվող միավորն իմաստային ծավալով չի ընդգրկում փոխառյալ միավորը, վերջինս էլ նոր միջավայրում ծնոր է բերում նոր իմաստներ ու իմաստային նրբերանգներ և գործածության հաճախականությամբ գերազանցում մայրենի միավորին՝ նաև լեզվագրական նոր համեմատությամբ:*

Ինչպես խաթր/խաթրի և հարգ կամ պատիի, դարձար-դինջ, նվեր (նիվեր) - խալաթ - փեշք-բարպրկա, պատճառ (պաճճառ)-մահնա, տփսոս (տփսոս) - մղամփական, քնի-քայի, քիր քի-միասին, ող-առող (վօլչ-սովուչ) - սաղ-սրմաթ, հայրենիք-ք<sup>3</sup>թ<sup>3</sup>ն, բայց-տմմա, գանձ (կի<sup>3</sup>նձ)՝ լատանա, թշնամի-դածշմ<sup>3</sup>ն, միջնարդ-ք<sup>3</sup>թ, գոյք (կ'օլք)ք<sup>3</sup>թիփ, վկա-շին<sup>3</sup>դի և այլն:

Հոմանշային վերոնշյալ խմբերի մայրենի միավորի ոչ հաճախական կիրառությունը պետք է բացատրել նրա հետ իմաստային բնյահանրություն ունեցող փոխառյալ միավորի իմաստային լայն տիրույթով՝ շբացառնով ժամանակային գործունը:

բ) Երկու միավորներն էլ կայուն գործածություն ունեն բանահյուսության լեզվում և իրենց գործածություններում ունենալով իմաստային բնդիանրություններ՝ նրանց միջև առկա է նաև նրբիւստային տարբերակվածություն: Տվյալ դեպքում փոխառյալ միավորն արտահայտում է նոյն հասկացությունը՝ իմաստային այլ երանգով: Ինչպես՝ Անծ (Արէծ) - զլէն, անկյուն(անգաճն) - պօճպի(թոր) - բարջ - քաճնջ(պրկ.) - ուզը(ուսու), մին պնդրան-մին ք<sup>3</sup>լմա (ք'ալմա՛ խոսք), Անծամնծնը (Արէծամլծէնք) - ախատիկանէ և այլն:

զ) Հոմանշային խմբերի ներերի միջև իմաստային տարբերակածություն գոյություն չունի: Տվյալ դեպքում փոխառյալ միավորի հաճախական գործածության փաստը կարենի է բացատրել միայն ժամանակային գործունով. ինը սերնդի խոսվածքում դրանք անհամեմատ հաճախական էին, քան այժմ են:

Այլ շերտուում կարենի է առանձնազննել նրկու խումբ՝ ա/Հոմանշային խմբեր, որոնց փոխառյալ ներ-միավորը գործառական հաճախականությամբ զերազանցում է մայրենի միավորին: Ինչպես՝ Մաքոր - թ<sup>3</sup>մածջ, տպած-տպածնը, դորթ-դածզ, ճար-թ<sup>3</sup>հրդյօն-իթ<sup>3</sup>զ(վերջինս չունի հաճախական գործածություն), տառին (տառչն) - սածվրա/սածքա, պատու - թիր'ա, կամմաց-կամմաց - յավաշ-յավաշ, ուժ (օժ)-դիմաթ, հերթ-նօրաթ-օչնընդ և այլն:

թ/Հոմանշային խմբեր, որոնց փոխառյալ միավորները աստիճանաբար արտասալիկի և արտասալիկում նեն բարբարից ու բանահյուսության լեզվից. վերջին շրջանում դրանց գործածության հաճախականությունը զգայիրեն նվազնի է: Ինչպես՝ չքնը (չքայլը) - ստխառ (սօնքար), դիմաց (տնմանց) - դամշար, արդուկարդ-զինյաթ, օգուտ (օրութ)-թ'ար, աշխարք-նլր'ա-դոնյա, ժողովուրդ-խալիս, զրոյց (զլաճօց) - զիլիչտ, գավազան (Վլվազան) - չօմայս և այլն:

դ) Հոմանշային խմբեր, որոնց ներերը տարբեր լեզուներից կատարած փոխառություններ են: Մայրենի համարժեք միավորը գործածական չէ: Ինչպես՝ Շլավկա - փափառ, բազար - յարմորկա, տաճրմա - դուստլստմա (նորացիր բանահյուսական նմուշներում գործածվում է նաև բանս մայրենի համարժեքը), աշապա - պօփոր, սալդաթ - լէզկ<sup>3</sup>թ, չէշմակ-աշկի, չփփ<sup>3</sup>թիմ - մալաղեց, յլորի - վիկա, փրմնթամէնք - բլրմննվրա, թ<sup>3</sup>մբ<sup>3</sup>լ - լոդր, այազ - մարօզ և այլն:

Ե) Փղսադյալ միավորներ, որոնք չունեն իրենց մայրենի համարժեքը և հոմանջային գոյց չեն կազմում. հոմանջային խմբում ընտրվող մայրենի միավորը չի ընդգրկում փղսադյալ միավորի հմատային տիրուցը: Ինչպես՝ մըսլիմաթ, նիզարան, գընգըլըստա և այլն:

## ԳԼՈՒԽ II

### ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԻՌՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲԱՆԱՀՅՈՒԹՅԱՆ ԼԵԶՎՈՒՄ Ա. ՁԵՂԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քերականական կարգերի քննությունը նպատակ ունի վերհանելու բանահյուսության լեզվի ծևաբանական-շարահյուսական հատկանիշները: Բանահյուսության լեզվի ծևաբանական համակարգը թենի նույնանում է բարբառի նույնանուն համակարգին, բայց որոշ իրողություններով, կիրառական առանձնահատկություններով տարբերվում է նրանից:

Բանահյուսական ստեղծագործություններում **թվական անունը** դրսորում է իմաստային ու կիրառական որոշ սառանձնահատկություններ:

Հաստ վիճակագրության՝ բանահյուսական նմուշներում **մին, էրկու, իրեք, օխոր, տասը, քառասուն, հեքածի, հազար/երգէր** թվականները շատ են գործածիւմ և արտահայտում են ոչ թե կոնկրետ, այլ մոտավոր, անորոշ բանակության իմաստ: Ընդ որում՝ բանահյուսական տարբեր ժանրերում դրանց գործածության հաճախականությունը տարբեր է: **Առած-տասացվածքներում** հաճախական են վերոնշյալ գրեթե բոլոր թվականները՝ բացառությամբ **քառասունի: Տասը, հեքածի, հազար** թվականներն առավել մեծ գործածություն ունեն **օրինաճներում**: Դրանք, արտահայտելով առարկաների մեծ քանակություն, իրենց արտահայտած բանակային մեծությամբ չափազանցում են առարկաների բանակական հատկանիշը: **Ներխաթներում** շատ են գործածիւմ **օխոր, իրեք և քառասուն** թվականները: **Խոսդիեներում** թվականների գործածությունը սահմանափակ է: Դրանուրիդ կիրառություններում ակտիվ գործածությամբ առանձնանում է **օխոր** թվականը: Այդ թվականները արցանցու թվաբանական այլուսակում շատ հաճախ չեն ընկալվում իրենց թվաբանական արժեքով և չեն արտահայտում կոնկրետ թիվ, բանակություն: Հաստ բանահյուսական տվյալների՝ **երեք, յաթ, տասը, քառասունը** սուրբ թվեր են: Ծվերի հմայական զորության նկատմամբ ունեցած այդ հավատը հեթանոսական արմատներ ունի: Եվ այսօր էլ դրանք արցանցու կյանքում ու սփորույթներում «կենցաղավարում» են՝ կարգավորելով ու կանոնավորելով նրա կենցաղն ու վարքը:

Դերանունների գործածության առանձնահատկություններից է բարբառում շատ սփորական դարձած **Ի դեմքի եզակի թվի են անձնական զերամիան փոխարեն մենք** հոգնակի թիվը կիրառությունը: Օրինակ՝ **Մունք ընք կիրա: Մենք մասման յէկայ ա:** Բանահյուսական ստեղծագործություններում այդ երևույթը չի դրսորվի: Հակառակը, չենք հանդիպել նաև քաղաքավարական **դոք-ի** կիրառության դեմքերի, նոյնիսկ ներ խոսքը ծավալվում է թագավորի և ծառաների կամ անծանոթների միջև: Սա ժողովրդական մտածողության հարազատ և բնորոշ իրողություն է:

Խոսքի մասերի համակարգում **քայն** իր քերականական դրսորումներով ամենաբազմազանն է ու ընդգրկունը և բանահյուսության լեզվում դրսորվում է քերականական ու ոճական տարաբնույթ կիրառություններով:

Բանահյուսական տարբեր ժանրերում բայց ժամանակները տարբեր հաճախականություն ու կիրառություն ունեն: **Ներկա ժամանակը** բանահյուսական նյութներում՝ հատկապես արձակ ստեղծագործություններում, ամենաշատ

գործածվող ժամանակն է և հանդես է զայիս գրեթե բոլոր ժանրերում՝ բացառապահամբ բանաձևային բանահյուսության՝ օրինանքներ, անձնըներ ժամանակաների:

Անցյալ ժամանակի ժամանակային բոլոր ձևեր թե՛ բուն և թե՛ երկրորդական նշանակություններով գործածվում են բանահյուսական ստեղծագործություններում։ Անցյալ ժամանակից առավել շատ գործածական են անցյալ անկատար, անցյալ կատարյալ, վաղակառար ժամանակածները։ Անցյալ անկատար ժամանակածներ իմբնականում արձակ-պատմողական ժանրի ստեղծագործություններում է հանդես զայիս և գործածվում է բուն ու երկրորդական նշանակություններով։ Անցյալ կատարյալ ժամանակը բանահյուսության մեջ՝ արձակ ժանրի ստեղծագործություններում, հաճախակի գործածվող ժամանակածներից է Բանահյուսական ստեղծագործություններում, հաճախակի գործածվող ժամանակածներից է Բանահյուսական ստեղծագործություններին անցյալ՝ արձակ ժանրի ստեղծագործություններում վաղակառարի ամենաքննորդ գործածությունն պատմական ներկայի իմաստով կիրառությունն է։ Ենթաթերում այդ գործածություննը մեծ տարածում ունի և արտահայտում է ոչ սույզ, որիշների ասածով հստատված, վկայված ենթություն։ Առածացվածքներում հաճախական են վաղակառարի՝ սահմանական ներկայի իմաստով գործածությունները։ Հարակատար և անցյալ հարակատար ժամանակները բանահյուսական ստեղծագործություններում գործածվում են թե՛ բուն և թե՛ երկրորդական նշանակություններով և ունեն լայն կիրառություն։ Առածացվածքներում, անձք-օրինաքններում այս ժամանակածները զրեթե չեն գործածվում։ Սահմանական նշանակի անցյալի ապառնի ժամանակածներ լրձական, ներառյալ կամ հարկադրական, ապառնի համեմատությամբ սակավ գործածություն ունի և անցյալ ապառնի համեմատություն բաղադրյալ ժամանակածներով արտահայտված լրձական անցյալի ապառնին, որը կազմվում է հարակատար, համակատար և ապակատար դերբայնով և լինել բայի լրձական նշանակի անցյալի ապառնի ժամանակով։ Ընդ որում ապակատար դերբայնով կազմությունները գործածական չեն, իսկ համակատարով գործածությունները նվազ հաճախական են, քան հարակատարով կազմությունները։ Ենթադրական նշանակի անցյալի ապառնին ունի կիրառական նույն առանձնահատկությունները, ինչ որ լրձական նշանակի անցյալի ապառնի ժամանակածներ։ Բանահյուսական ստեղծագործություններում ներառյական անցյալի ապառնին սակավ գործածություն ունի։ Հարկադրական նշանակի անցյալի ապառնին կազմվում է բիդի/բիդմա/բրդյա/ափտի նշանակիչով և լրձական նշանակի անցյալի ապառնի ժամանակածներով։ Նշանակիչը անցյալի ապառնիով, ի տարրելություն ապառնի, որի դեպքում այն կարող է դրվել և՝ նախադաս, և՝ նտադաս, դրվում է միայն նախադաս։ Միայն նշանակի թվի 3-րդ դեմքում նշանակիչը կարող է նաև նտադաս դրվել։ Այս դեպքում խոնարհվող բայը վերցվում է անողոշ դերբայնով և նշանակիչը է ստանում դիմք, թիվ, ժամանակ։ Պիսի լինելի հարադիր բայը խոնարհման ժամանակ շատ հաճախ հանդես է զայիս պիսի/բիդի, պիտէիր/բիդի, պիտուր/բիդար համադրական ձևերով։

Ապառնի ժամանակը իր դրսնորման բոլոր նշանակներով ու ձևերով արտահայտված է բանահյուսական ստեղծագործություններում։

Սահմանական նշանակի ապառնի ժամանակը բանահյուսության մեջ գործածվում է միայն բուն նշանակությամբ, բաղադրվում է ապակատար դերբայնով և օժանդակ բայի ներկա ժամանակով։ Ապակատար դերբայը ունի -ական կամ -ան և -ելու կամ -այու վերջավորությունները։ Դրանք նոյնանիշ միավորներ են, բայց

գործածության հաճախականությամբ համարժեք չեն, որն էլ պայմանավորված է իին ու նոր սերնդի խոսվածքային առանձնահատկություններով: -Ական, -առ վերջավորույթամբ կազմությունները կայուն հաճախականություն ունեն և իին, և նոր սերնդի խոսվածքում, իսկ- եղու, -այու վերջավորույթամբ ծերը գրական լեզվի ազդեցություն են, թեպես վերջին շրջանում չեն զիտակցվում որպես այդպիսին և գործածության կայուն հաճախականությամբ կիրառվում են նոր սերնդի խոսվածքում: *Մահմանական եղանակի ապառնին դրական, ենթադրական և հարկադրական ապառնիների համեմատությամբ սակավ է գործածվում: Ծղական ապառնությամբ բանաձևները հատկապես շատ են գործածվում բանաձևային բանահյուսության ստեղծագործություններում առած-ասացվածքներում, անձնօններում, օրինանքներում:* Ենթադրական և հարկադրական եղանակի ապառնիները ունեն կիրառական այն առանձնահատկությունները, ինչ որ դրական ապառնությամբ ներկայական աստղագործություններում առած-ասացվածքներում դրսորվում է միայն հնչերանգով, որը գրափոր խորություն որևէ նշանով չի արտահայտվում: Հորդոր, հրաման, կոչ, պատվիր արտահայտելու համար բանահյուսական ստեղծագործություններում առավել հաճախ գործածվում է դրական եղանակի ապառնին ժամանակակից:

Բանահյուսական ստեղծագործություններում դրսորվող բայի ժամանակաձևները գործածության նոյն հաճախականությունը չունեն: Դա երևում է բանահյուսական ստեղծագործություններում բայի ժամանակային ձևերի վիճակագրական պատկերի վերլուծությունից:

**Արձակ ստեղծագործություններում հերիթարներում** առանձնապես լայնորեն կիրառվում է պատմական ներկան, որը գործառական հաճախականությամբ գրեթե 3 անգամ զերպանցում է մյուս ժամանակաձևներին: Այսպես, օրինակ, «Թարավիթեն տղան թարավիթ» հերիթարի<sup>22</sup> 72 նախադասությունից 51 նախադասության ասորովում ներկա ժամանակաձևով է դրսորվել (72%) և միայն 21-ը՝ այլ ժամանակաձևներով՝ անցյալ կամ ապառնի (28%): Լամ՝ «Լոռոր կրտրած ախճզյը» հերիթարում<sup>23</sup> 41 նախադասությունից 33-ում բայ-ստորովյալը ձևափորված է ձևաբանական ներկայով (83%), մյուս 8 նախադասություններում՝ այլ ժամանակաձևներով (17%): Ընդ որում՝ և՝ այդ, և՝ նախորդ հերիթարում այլ ժամանակաձևներով գործածությունները հիմնականում դրսորվել են մեջքներումային կապակցություններում:

**Հանելուկներում** ևս բայ-ստորովյալի ձևաբանական արտահայտության հիմնական ժամանակը պատմական ներկան է<sup>24</sup>: 100 հանելուկներից 69-ում բայ-ստորովյալն արտահայտված է ներկա ժամանակաձևով, իսկ 21 հանելուկներում բայ-ստորովյալն արտահայտվել է ապառնի (դրական) և անցյալ (անցյալ կատարյալ) ժամանակներով: **Արձակ ժանրի նորոգիր բանահյուսական ստեղծագործություններում (մանրապատռումներում)** հավասարապես գործածվում են պատմական ներկան ու անցյալ անկատարք: Վերջինս մեծ հաճախականությամբ է գործածվում հատկապես հետինակային միջարկություններում: **Քսարթական ստեղծագործություններում** ներկա-անցյալ-ապառնի ժամանակները կիրառական գրեթե նոյն հաճախականություն ունեն: Այսպես՝ 100 խափիկներից 65-ում բայ-ստորովյալը արտահայտված է վաղակատար ժամանակաձևով, 35 խափիկներում՝ հրամայական ապառնի, ենթադրական և դրական ապառնի ժամանակաձևներով<sup>25</sup>: Վերլուծության նոյն կարգով քնննելով՝ 100 խափիկներից 45-ում՝ ներկա ժամանակ, 54-ում՝ ապառնի ժամանակ (23-ում՝ դրական ապառնի, 31-

<sup>22</sup> Հայ ֆոլովրդական հերիթարներ, հ. VI, Ե., 1973, էջ 95:

<sup>23</sup> Տե՛ս նոյն հայություն, Ա. Վ. Ե., 1979, էջ 21:

<sup>24</sup> Սարգսյան Ա.Յու., Արդարական հանելուկներ, Ստենի., 2002, էջ 26-39:

<sup>25</sup> Լոռնային Ղարաբաղի բանահյուսություն, Ե., 1971, էջ 138-152:

ում՝ Ենթադրական ապառնի), *I*-ում՝ վաղակատար<sup>26</sup>: **Առած-սասացվածքներում** բայստորզային արտահայտված է գրեթե բոլոր ժամանակներով՝ ապառնի (հրամայական, բջական կամ Ենթադրական) զերակիր զործածությամբ: **100** առանձներից **63**-ը ձևավորվել են ապառնի ժամանակաձևով, իսկ **37**-ը՝ ներկա կամ անցյալ<sup>27</sup>: **Օրինարքներում ու առնեծքներում** բացառապես ըրձական ապառնի ժամանակաձևն է կիրառվել (100%):

Բանահյուսական ստեղծագործություններում նշանակաժամանակային ձևերի ընտրությունը նպաստակամն է և պայմանավորվում է խսրային իրադրությամբ՝ իրականության հետ հաղորդելիքի բովանդակության հարաբերությամբ և հաղորդողի հաղորդման բովանդակության նկատմամբ ունեցած վերաբերմուճնով:

**Նյութական իմաստ** չունեղող բաները բանահյուսական ստեղծագործություններում դրսմուում են որի առանձնահատկություններ՝ պայմանավորված ստեղծագործության ժամանակային նկարագրով, ժամանակային գործոնով և հեղինակային միջամտությամբ: **Կատարելը** բանահյուսության լեզվում լայն կիրառություն ունեն և արտահայտում են քերականական բազմապիսի հարաբերություններ՝ **տարածական՝մաշին** (համարժեք է մեջ և միջև կատիրեն), տակէն, յրան, կօլմէն, բիլի/բրդյա/դիքի, կօշտը, թուշավը, բրմակէն, առաջ, տածու, իդ՛ու, իդ՛տը, դաթումը, **վերաբերության**, անա, նմ՛տու, բացառաման՝ կրման, սավայի, բռանցի, **զիջման**, ծըրդու, լաշու, տղ՛դ, տղ՛դակ, ժամանակի, չօրանը, չքէ՛անը, չուրու, չէլանը, չքօրու, բ<sup>3</sup>առ/լր<sup>3</sup>թ, վախտը, յէտը, պատճառի՝ չորհավը, յուղուրավը, դ<sup>3</sup>րդ<sup>3</sup>, **նպատակի**, մրհար, խաթքած, հիտէ, բացահայտման՝ հունցու, **ծիկ**՝ մընան, չափի՝ մըչանք, գն՛րա, իվիլ, **միասնության**, նրիիւտ, **եիմունքի**, <sup>3</sup>րթակ(համապատասխան): Լ.Հովհաննիսյանը «արթակ» բառի ծագումը կապում է գրաբարյան «արդ» արմատի հետ. «Ղարաբաղի բարբառում այն նշանակում է «ամբողջովին», բոլորովին», այս կազմությունը և իմաստը ավանդված չէ գրաբարում»<sup>28</sup>: Բայց տարածված է նաև այս բառի կապական գործածությունը՝ ուղղությամբ, համապատասխան իմաստներով, ինչպես՝ *Sրբանն* <sup>3</sup>րթակ վրէննը կաց: *Արա*, դէ գործէն <sup>3</sup>րթակ պէն փրնէ, վէր պէնու էլ մընան ինի<sup>29</sup>:

Բանահյուսության լեզվում կապիրի գործածության դրսուրիող առանձնահատկությունները պայմանավորված են նրանց գործածության հաճախականությամբ ու գրական հայերենի հետ ունեցած առնչություններով:

Արդի գրական հայերենում և բարբառում **շառկագները** ունենալով շատ ընդհանրություններ, դրսուրում են իմաստային ու գործառական որոշ տարրերություններ:

Գրավոր-խոսակցական լեզվում, ի տարբերություն գրավոր-գրականի, **շառկագների** գործածությունը սահմանափակ է: Արդի գրական հայերենում գործածվող հինգ տասնյակից ավելի շառկագներից բարբառում առկա են ներկու տասնյակից ոչ ավելին:

Բանահյուսական ժամբերի ստեղծագործություններում մեր կատարած վիճակագրությունից պարզվում է, որ շարահարական կառույցները գրեթե 3 անգամ զերազանցում են շառկագնական կառույցներին, առկա է շառկագնական և անշառկապ կապակցությունների անհամամատանություն՝ 1/3 հարաբերությամբ:

«Նրիաթներում 100 կապակցություններից 28-29 շառկագնական կառույցներ են (իմաստանում ստորադասական կապակցություններ), մյուսներ՝

<sup>26</sup> Տե՛ս նոյնը, էջ 170-185:

<sup>27</sup> Նշանաներ Արցախի բանահյուսության, Ե., 1991 էջ 176-178:

<sup>28</sup> Հովհաննիսյան Լ.Ը., Գրաբարի և Ղարաբաղի բարբառի առնչության հարցի շուրջ,

ՊԲՀ, հ.1, Ե., 1977, էջ 143:

<sup>29</sup> Սարգսյան Ա.Յու., Ղարաբաղի բարբառի բացառական բառարան/ձեռագիր/:

շարահարական: Օրինակ՝ «Դորվիշին հարյալթում»<sup>30</sup> 100 կապակցությունից 28-ը շաղկապական են, 62-ը՝ շարահարական: Կամ «Քյասիք տղթան» հերիաթում<sup>31</sup>՝ 100 կապակցությունից 29-ը շաղկապական են, 61-ը՝ շարահարական: Առածացվածքներում հարաբերակցությունը դարձյալ նույնն է. 100 կապակցությունից (ընտրվել են բարդ կառույցներ) մոտ 30-ը շաղկապական կառույցներ են, մյուսները՝ շարահարական: Վիճակագրության արդյունքներից ակնհայտ է դառնում մեկ փաստ ևս. գործածիքը շաղկապական կիրառություն ունեն ստորադասական շաղկապակներ (հիմնականում՝ *վեր, թա*), իսկ համադասական շաղկապակները սակավ կիրառություն ունեն: Եվ բանահյուսական ստեղծագործություններում շարահարական կառույցների աճ դիտվում է հիմնականում ի հաջիվ համադասական կապակցությունների:

Բանահյուսական ստեղծագործություններում գործածիքում են համադասական շաղկապակներից՝ *ու/հո, էլ, վեչ...վեչ, մինգէլ, ամմա* (երբեմն՝ *պայց*), *թա չէ, մինակ թա, նան, համ, յա* և այլն, ստորադասական շաղկապակներից՝ *վեր, թա, հանգու վեր, թան թէ, լիս, եիր վեր, եինչ, թանէ վեր, փօխանակ, նըրա ելիտ...վեր* (երբեմն՝ *զօրովիթւով*), հազվադեպ՝ *թէրնդ, թէզով*. Վերջիններս գրական լեզուից ազդեցության արդյունքն են և չունեն մեծ տարածում:

Համադասական շաղկապակներից առավել շատ գործածիքում են փոխառյալ՝ *համ, ամմա, յա, նան* և բնիկ՝ *մինգէլ* շաղկապակները: Հազվադեպ հանդեն է զայխու *ու/հու* բնիկ շաղկապալը: Քարարատը, բանահյուսական ստեղծագործություններում և շաղկապալը գործածական չեն: Վկայացն դնաբերն էլ արդի գրական լեզվի ակնհայտ ազդեցության արդյունքն են: Հազվադեպ են և-ի գործածության դնաբերը նաև նորագիր բանահյուսական նմուշներում: **Են**շաղկապի փոխարեն գործածիքում են *մինէլ, մինգէլ, նան շաղկապակները*: Բանահյուսական ստեղծագործություններում չեն գործածիքում նաև *իսկ շաղկապը*: **Լուս** մենադիր և նույնանուն կրկնադիր շաղկապակների փոխարեն գործածական են փոխառյալ *յա* մենադիր և նույնանուն կրկնադիր շաղկապակները: Վերջիններս մայրենի միավորների համեմատությամբ չունեն գործառական ու իմաստային որևէ տարբերակվածություն: Ծառ գործածական է *ամմա* շաղկապը, որի մայրենի համարժեքը՝ *թայց-ը*, դեռևս սահմանափակ կիրառություն ունի, բայց վերջին շրջանի գրառումներում նկատնի է նրա գործածության հաճախականության ակտիվություն:

*Ստորադասական շաղկապակների* գործառական ոլորտը ընդգրկուն է: Թօ՝ արդի գրական հայերենում, թե՝ բանահյուսական ստեղծագործություններում ստորադասական շաղկապակները իմաստային պլանում նույնարժեք են:

Բանահյուսական ստեղծագործություններում *որովիթւով, թանիք որ շաղկապակները սահմանափակ կիրառություն ունեն*: Հիմնականում գործածիքում է նրանց համարժեք բարբառային *նըրա ելիտ...վեր* զուգադիր շաղկապը: *Որովիթւովի* գործածությունը գրական լեզվի ազդեցության արդյունք է:

Բանահյուսության լեզվում իմաստային ու գործառական որոշ առանձնահատկություններ են որում և որություններ են լեռանականից վառականից:

Գործածիքում են թե՛ բնիկ և թե՛ փոխառյալ վերաբերականներ. *լ'րիս, խառ լ'րիս, ալ լրագընում, էլլրիս, թաթիս, տինինիք թա, ասիս թա, ըիզ, հաստէ, հաստէ, հաստէ, դաշօց վեր, հ<sup>3</sup>լր<sup>3</sup>թ, հունց թա, մլոստմ, միզ<sup>3</sup>մ, իլչէլրիստ, դէ, հօ, խօս, հու, անումը չէ, հա, էսա, էնա, էտա, յէտ, տոկ, ունզատին, հ<sup>3</sup>վածը, բ<sup>3</sup>լիթ<sup>3</sup>/թիթ<sup>3</sup>/թամ,*

<sup>30</sup> Հայ ժողովրդական հերիաթներ, հ. VI, Ե., 1973, էջ 74:

<sup>31</sup> Հայ ժողովրդական հերիաթներ, հ. V, Ե., 1966, էջ 284:

*յ<sup>3</sup>նի, յարաք, ս<sup>3</sup>ք՚ի, մաղու, իլլ<sup>3</sup>քի, վայնաշարին, լափ, էնվեր ա, կօնյա, կօնյա լ՚րիս, թ<sup>3</sup>ք՚իթ՚ք<sup>3</sup>ք՚չա/թ՚ք՚ լ՚րիս, հազըր, ախէր/ախէրամ, սաքտվ, գ՚իկ՚ք՚ի, վէրջ վէրջավ, ըսկաբն, հանց և այլն:*

Գործածիղ 5 տասնյակից ավելի վերաբերականներից փոխադայալ են մոտ 1.5 տասնյակը, որի մեջ կան և՝ գործածվող միավորներ, ինչպիսիք են՝ լ՚րիս, թ<sup>3</sup>իք՚ի, թ՚ք՚ի, հ<sup>3</sup>լր՚թ, յ<sup>3</sup>նի, և՝ մարտ, արխակղմների վերածվող՝ ալ՚րդադնում, մարու, գ՚իկ՚ք՚ի, և՝ մարտծ, վերտարուկային արժեն ունեցող՝ ս<sup>3</sup>ք՚ի, իլլ<sup>3</sup>քի, վայնաշարին և այլն: Գործածությամբ և բանակական զերակշռությամբ առանձնանում են բնիկ միավորները: Փոխադայալ վերաբերականները նոյնպես լայն կիրառություն ունեն և որոշ գործածություններում նոյնիսկ զերազանցում են մայրենի միավորներին: Ըստ այդմ՝ դրանք կարենի դասակարգեն:

1. Փոխադայալ միավորներ, որոնք ունեն նոյնանիշ մայրենի եզրեր՝ սակավ գործածությամբ: Ինչպես՝ թ<sup>3</sup>լի/ թ<sup>3</sup>լր՚տմ/ թ<sup>3</sup>լր՚ի - քուց, թ<sup>3</sup>ք՚ի/ թ<sup>3</sup>ք՚ լ՚րիս/ թ<sup>3</sup>ք՚չա - մինակ թա, հ<sup>3</sup>լր՚թ - յէրէվի, լ՚րիս - ենց:

2. Փոխադայալ միավորներ, որոնք ունեն համանիշ մայրենի եզրեր՝ կիրառական գրեթե նոյն հաճախականությամբ: Ընդ որում՝ երբեմն մենք փոխադայալ միավորի իմաստային տիրույթը կիսում կամ բաժանում են մի բանի մայրենի համարժեքներ, կամ՝ հակառակը: Ինչպես՝ Լ՚րիս-ն գործածվում է «հէնց», «կօնյա», «ասիս» իմաստներով և ակտիվիտեն հանդես է զախս նաև որպես այլ վերաբերականների կազմության բաղադրիչ՝ կօնյա լ՚րիս, թ<sup>3</sup>ք՚ լ՚րիս, մինակ լ՚րիս, խաս լ՚րիս, խէշ լ՚հաս և այլն: Իսկ մըտմ - գ՚իկ՚ք՚ի - սաքտվ - ս<sup>3</sup>ք՚ի փոխադայալ վերաբերականներին համարժեք է մայրենի իփր թա միավորը, ախըր /ախէր/ ախէրամ - չէ վէր և ախըր - վէրը:

3. Փոխադայալ վերաբերականներ, որոնք չունեն մայրենի համարժեք, ինչպես՝ յ<sup>3</sup>նի, ալ՚րդադնում, մաղու, իլլ<sup>3</sup>քի և այլն:

Նորագիր բանահյուսական նմուշներում նկատենի է փոխադայալ ենանակավորող բառերի արտամում: Այդ գործընթացն ուղեկցվում է համապատասխան գրական միավորների փոխառությամբ:

Ի տարբերություն եղանակակիրող բառերի՝ **ծայնարկությունները** բանահյուսական ստեղծագործություններում թիշ են գործածվում, բայց գործառական ու իմաստային որոշ առանձնահատկություններ դրսւում են, որով և առանձնանում են արդի գրական հայերենի համանուն ձևերից:

Բարբառում, բանահյուսական ստեղծագործություններում նկատելի ենք, որ բնածայնական ծագում ունեցող ծայնարկությունները ունեն նաև առարկայական նշանակություն. անվանում են այն կենդանիները, որոնք արտաքերում են այդ ծայները: Օրինակ՝ **հաս-ֆ-հաս ֆ** ծայնարկությունից առաջացնել է **հաֆու** գոյականը, հնդկահավի հանած՝ **գուլ՛ու-գուլ՛ու** ծայնից՝ **գուլ՛ու, գուլ՛ուվէր** (հնդկահավ) գոյականը: Առարկայական այդպիսի նշանակությամբ լայն գործածություն ունեն կոչական ծայնարկությունները, որոնց նյութական իմաստով գործածություններն ավելի հաճախական են: **Զշռ՚ն/քո՛ւզո՞ւքո՞ւթուն** էշին դիմելու կոչական ծայնարկություն է ու նաև անվանում է կենդանին: **Թողի-ն** նոյնպես և՝ կոչական ծայնարկություն է, և՝ կենդանու անուն, ինչպես՝ թո՞շ են, այսինքն՝ է՛շ, ե՛կ: Նոյնն է նաև **դ<sup>3</sup>-ն** (ձիուն քշելու կոչական ծայնարկություն), **քո՞յի, քո՞յի-ն** (շանը կանչելու ծայնարկությունը), **դած-դած-ն**(հնդկահավին կանչելու ծայնարկությունը): Հորթին կանչելու ծայնարկություն՝ **քի՛ժի-ն**, ծամանակակից լեզվագզագորությամբ այլևս չի գիտակցվում որպես ծայնարկություն, այլ իբրև

գոյական՝ կովի ծագ՝ «հորթ»։ Այդպես են նաև՝ **փի'սի-փի'սի**-ից առաջացած փիտա՞ն, **ծի՛պա-ծի՛պա**-ից առաջացած ծիտա՞ն (հավ, ձուտ), **ճա՛ճ-ճա՛ճ**-ից՝ ճաճաճաճ և այլն առաջացած առաջազնի թշուն։ Հիմաստով, **գրիշ-գրիշ**-ից՝ գրիշ-ն՝ «զա» նշանակությամբ։ Ուշագրավ է, որ բարբառում, բանահյուսության մեջ առկա է նաև հակառակ երևոյթը՝ նյութական իմաստ ունեցող բառի՝ տվյալ դեպքում կենդանու անոն բառի ծայնարկության վերածվելու գործընթացը։ Այդ դեպքում առարկան գործածվում է որևէ կոչական բառի հետ, նշանա՞լու համար։ Եսկ շանը որսի մղելու հրահրում են՝ կանչելով՝ **վլի՛տ-վլի՛տ** հետ բարից։

## ԲԺԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բանահյուսական ստեղծագործություններում առկա են շարահյուսական այնպիսի կառույցներ, որոնք լեզվական հետաքրքիր երևոյթներ են և հատուկ են ժողովրդական խոսքին, ժողովրդի լեզվամտածողությանը։

Շարահյուսական այդպիսի կառույցները կարենի է դասակարգել՝ **կայունացած, դիպվածային և կայունանալու միտում ունեցող**։

Բարբառում, բանահյուսական ստեղծագործություններում կայունացած գործածություն է «ուննալ», բայի իմաստով «ունիի» և «լինել» բայերի հետ ենթակայի տրական հոլովով գործածությունը, ինչպես՝ Ես **Ղզ<sup>3</sup>իկն** օխսող քոր ա ինձա՞ս։ Սակավ, բայց նոյն բայի հետ առկա են ուղղական հոլովով ենթակայի գործածության դեպքեր, որոնք զրական լեզվի ազդեցություն են և դեռևս դիպվածային կառույցներ են։ Կայունացած գործածություն է նաև դիմավոր բայ եղածակիչ+դիմափոր բայ կադապարով բաղադրյան բայական ստորցայի գործածություն, ինչպես՝ **Մարդն օգում տ կրնանը կրյախը Վարեն**, ասել փոչ, ամմա կրնեցը ըստիքում ա։ Դիմավոր բայ եղածակիչ+անորոշ դերքայի ուղիղ ծե կադապարով կապակցությունը զրական լեզվի ազդեցություն է։

Բանահյուսական նմուշներում մեծ տարածում ունի դրձակմն եղածակի ապարակ ժամանակաձևի 3-րդ դեմքի գործածությունը իբրև նպատակի պարագա։ Նորպակիր բանահյուսական նմուշներում նկատելի են այդպիսի կառույցների զրականացված գործածություններ, որոնք վերջին շրջանում նկատնիրեն հաճախացն են, ինչպես՝ **Զենցալ տ տեխնիկում սըվերում**։ Նպատակի պարագան կարող է դրվել ուղղական-հայցական հոլովով տրականի փոխարեն, ինչպես՝ **Հորրն ան մորը տարալ ա Բարոն դիմսուր**։ Բանահյուսական ստեղծագործություններում **կայունացած** գործածություն է նաև անձնամիշ ուղիղ խնդրի՝ ուղղական հոլովով կիրառությունը, ինչպես՝ Ես **Կյոզը փոնալ րիւ**։

Բանահյուսության լեզվի շարահյուսական կառուցվածքին բնորոշ երևոյթ է բակառություն՝ ենթակայի և ստորոգյալի իմաստային համաձայնությունը։

Հոգնակի ենթակայի եղակի ստորոգյալի հետ համաձայնության դեպքները բավականին գործածական են հատկապես եթե ենթական մարմնի զոյզ անդամն է կամ հավաքական իմաստ ունի։ Հաճախական են նաև եղակի ենթակայի՝ հոգնակի ստորոգյալի հետ համաձայնության գործածությունները։ Շարահյուսական ու իմաստաբանական առումով ենթաքրքրական է նաև **ինքն** դերանվան եղակի թվի բացառական հոլովածելի գործածությունը, որի նկարագրական կազմությամբ ձևը նշանակությամբ ու առումով տարբերվում է վերջավոր կազմությամբ ձևից։ Նկարագրական կազմությամբ այն պահպանում է

անձի առումը, իսկ վերջափոք կազմությամբ ծեր իրի առման նշանակություն է տրանում: Բանահյուսական ստեղծագործություններում առկա են ներգոյական հոլովի փոխարեն ուղական-հայցական հոլովով արտահայտված տեղի պարագայի գործածության դեպքեր: Այդպիսի կառուցները դիպվածային են և կայունանալու միտում չունեն, ինչպես՝ *Մոլլան* ասում առ. - Հն դրվագ յըմ իլ<sup>3</sup> է և, մեռած էն ըմ իլ<sup>3</sup> էն դրայտ:

Բանահյուսական լեզվի շարահյուսական համակարգի կառուցվածքային առանձնահատկություններից է շաղկապների սակավ կիրառությունը. կապակցությունները իմանականում շարահարական են:

Բանահյուսական շարահյուսական համակարգում հանդիպում ենք նաև դիպվածային՝ բերականական ոչ ճիշտ կառուցների:

Ծարահյուսական առանձնահատկություն են դրսորում ուրիշի ուղղակի խոսքի անուղղակի փոխադությունները, որոնք նրբեմն շենիում են բերականական ընդհանուր կանոններից: Եվ շատ հաճախ ուրիշի ուղղակի խոսքը նույնությամբ և ուղղակի ուրիշներն է բերվում անուղղակի փոխադրած կառուցում: Կան նաև ուղղակի խոսքի անուղղակի վերածված բերականական ճիշտ կառուցներ, բայց դրանք մեծ թիվ չեն կազմում:

### ԳԼՈՒԽ III ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ԼԵԶՎԻ ՈՃԱԿԱՆ ԱՌԱՋՎԱՆԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բանահյուսական ժողովրդական խոսքի արվեստ է՝ ստեղծված բանավոր խոսքին հատուկ չափանիշներով: Բանահյուսական ստեղծագործություններում դրսուղին լեզվական կառուցվածքի յուրաքանչյուր միավոր նաև ոճական միջոց է և արտահայտում է ժողովրդի լեզվամտածողությունը:

Բանահյուսական ստեղծագործություններում այս կամ այն ոճական հնարանքի ընտրությունը միտված է նաև ստեղծագործությունների ժանրային նկարագրի բացահայտմանը և հանդիս է զային իբրև տվյալ ժանրի կառուցվածքային հատկանիշ: Առած-ասացվածներում գերակայող արտահայտչամիջոցը համեմատություն ու համընթացումն է, հանելուկներում խորհրդանշանն ու փոխարերությունը, խաղիկներում՝ մակդիրներն ու կրկնությունները, հերիաքաներում՝ չափազանցումը: Բայց և չկա որևէ արտահայտչան, որ ժանրային այդ ձևերում չկիրառվի:

Պատկերավորման միջոցներից խորհրդանշանն ու փոխարերությունը հանելուկներում ավելի լայն կիրառություն ունեն և կազմում են հանելուկային բանաձևի հիմքը: Հանելուկային պատկերի կերպարման կարևորագույն եղանակներ են այլառանությունը, անձնավորումը Այդ ժանրատեսակի կառուցվածքային բնորոշ հատկանիշը հարցումային ծևակերպումն է: Հանելուկներն աշքի են ընկնում նաև տաղաչափական ինքնատիպ առանձնահատկությամբ՝ հանգիստությամբ՝ խոսքի մեջ համանուն հնչյունների կրկնությամբ: Տաղաչափական որոշ երևույթներ ել պայմանափորված են բարբառի լեզվական առանձնահատկությամբ:

Առածները բանաձևային բանահյուսական մյուս ժանրերի համեմատությամբ գործառական լայն շրջանակներ են ընդուրվում: Առած-ասացվածների պատկերային համակարգի հիմքն են կազմում համեմատությունն ու համընթացումը. Առածների բռվանդակային յուրահատկություններից է նաև երգիծանքը: Երգիծանքը առածի դաստիարակչական եռությունը բացահայտելու

կարևոր գործուն է: **ԱՆՁՆԱՎՈՐՈՒՄԾ** առածներում դարձնում է մարդկային իրական հատկանիշների, առարկաների, նըլույթների ճշշտ ընկալման ու զնահատման չափանիշ:

Ժանրային առանձնահատկությամբ պայմանավորված՝ **Խաղիկները** որոշակիորեն տարբերվում են ոճական քննության ու զնահատմանի չափանիշներով: Խաղիկներում դրսևրփող ոճարտահայտության միջոցներից ամենայայն կիրառումն ունի **մակարդ համեմատությունն ու փոխառելությունը** նույնպես խաղիկների պատճենային կատուցով շատ կենսունակ ու գործուն պատկերածներ են: Ուժեղացնելով խոսքի հոգական ներգործությունը՝ համեմատվող հատկանիշներն ավելի տպագորիչ են դարձնում նկարագրող երևույթ՝ ընդլայնելով նաև բառերի իմաստային տիրույթները: **Կրկնությունը** խաղիկում կատուցածքային տարր է՝ ժամանակակիրայուն: Գրեթե բոլոր խաղիկներում հանգային ներդաշնակությունն ու դիմային համաշխատությունը առկա են, որոնք հարակցված են կամ հնչոյթակրկնություններին, կամ բառակրկնություններին: Դրանք ապահովում են դիմային չափերի համահնչությունը, ընդգծում հոգագրումների զգայրնկալման խորությունը: Խաղիկներում լայնորեն կիրառվում են նաև **համադրությունը, ճարտարական հարցը, բացականչությունը, դիմումը**: Խաղիկներում **հնչյունները** նույնպես ունեն ոճական նկարագիր: «Նչյունային ոճական հնարանքները՝ բաղադասայօթը, տռախանյօթը և համզզը, զուգորդում են իրար զգայականն ու պատկերայինը, արտահայտությանը հոգական մեծ լիքը հաղորդում: Բանահյուսական ժանրատեսակների համակարգում խաղիկը առանձնանում է տաղաչափական դրույթների ինքնատիպ ու յուրօրինակ դրսորմասիք: Յուրաքանչյուր հնչյուն, բայց միտված են հանգ ու վաճիք չափակարգի, ոիթեմի պահպանմանը: Եթեմն իմաստային կողմը կենսորուականից դուրս է մնում՝ տեղը զիշելով չափակարգին: Վերջինս էլ խաղիկների տաղաչափական յուրահատկությունների դրսորման կարևորագույն պայմանն է:

**Ենքարթը** բանահյուսական համալիր ժանր է՝ բոլոր բանահյուսական ժանրների լեզվական ու ոճական առանձնահատկություններն ընդգրկող: Ոճարտահայտության միջոցները կիրառության լայն հնարավորություններով դրսորդվում են այդ ժանրատեսակում: «Ենքարթում ոճական բոլոր միջոցները ուրույն դեր ունենակություն ունեն. դրանք միտված են պյուժնտային ու բովանդակային տարրի զերակայությունն ապահովելուն, որն այդ դեպքում և՝ հնքիաթի ժանրային նկարագիր է, և՝ կատուցվածքային առանձնահատկություն: Ոճանիշ յուրաքանչյուր միավոր հնքիաթում նախ և առաջ կատուցվածքային միավոր է:

«Ենքարթում իբրև բնագրային զերակայություն կումորն է՝ զուգակցված չափազանցությանը, որը հնքիաթում ոճական հնարանք չէ, այլ ենթաբնագրային հիացք: Լեզվական, ոճական արտահայտչահամակարգի բոլոր տարրները հնքիաթում մենք գործառույթ են իրականացնում՝ իրականի ու անիրականի, սովորականի ու անսովորի համարություն՝ իմքում անխափան ունենալով ենթարկեալ համադրությունների համադրությունն է: Այն դրսորդվում է հնքիաթային նախադրությամբ, դառնում պյուժնտային առանցք և վերջագործում հնքիաթային վերջաբանով: Գրեթե յուրաքանչյուր հնքիաթ ունի նախադրություն՝ «ինձած ա, չինձած մ», «իլ ա, չիլ լ»: Հակադրական-երկրայական այս նախաբանը

դարնում է ոճանիշ առանցք: Հաստատում՝ Ժխուում՝ Ժխուում՝ հաստատումով. սա նաև հերիաթի դիպաշաբախին կառուցվածքի հենքը է:

Հերիաթը էպիկական բանահյուսական ժանր է և, բնականաբար, հերիաթի լեզուն չունի քնարական ժանրատնասպակներին հասուկ դիմական չափը: Բայց բանահյուսական արձակ ստեղծագործություններում, հերիաթներում նկատելի է լեզվական ժիթմայնության միտում: Այն զգայի է հատկապես հերիաթային նախադրություններում ու վերջադրություններում: Օրինակներ՝ հի՞ ա չի՞ մին կնեցյ: Ես լեզվանն էլ ի՞ ա մին թ՞ մթ՞ ալսծից: Չարք պատժից, պարին հախտից: Այդ ժիթմիկ կրկնություններն անընդհատ փոփոխվում են, ընդհատվում արձակ, անփել շարադրանքով, ինչն էլ զերծ է պահում հերիաթի լեզուն միօրինակությունից ու միապահադությունից:

## ԳԼՈՒԽ IV ԳՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Բանահյուսության լեզուն մշտապես զտնվում է երկու կարևոր գործոնների ազդեցության տակ՝ **լեզվական լեզվի** և **գրական լեզվի**: Լեզվական այդ իրողությունները ուղղված են բարբառին նրա պատմական զարգացման ողջ ընթացքում: **Գրական լեզվուն** իր գերակա ազդեցությամբ աստիճանաբար սահմանափակվում է բարբառների զարգացման հնարավորությունները և ինքնին նպաստում նրանց գրականացման գործընթացին: Այսօր այդ գործնթացն առավել քան ակնառու է, և բանահյուսության լեզվի քննությամբ փորձել ենք պարզել՝ ինչով է այն արտահայտվում, որոնք են այն պայմանափորող ու խթանող գործոնները, պատմական պայմանները, որոնք լեզվական տարբեր մակարդակներում նրա ազդեցության չափը :

### ԳՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ ԵՎ ԽԹԱՆՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐ

**Գրականացումը գրական լեզվի ազդեցությունն է բարբառի վրա, որն արտահայտվում է լեզվական բոլոր մակարդակներում:** Գրականացման իրեն բարբառային իրողության առաջացումը պայմանավորված է մի շարք գործոններով, որոնցից յուրաքանչյուրը այս կամ այն կերպ խթանում է այդ գործընթացը: Դրանք են՝

1. **Բանահյացի կողմից նյութի հսկողությումը.** լեզվական մշակման առաջին փուլը կապվում է բանասացի կողմից նյութի փոխադրման հետ: Բարբառակիր բանասացը նյութը պատմելիս գրական տարբեր է ներմուծում այն ավելի կիրթ ու զնինեցիկ հատորիներ ակամա միտումնայնությամբ:

2. **Բանահյացի կողմից նյութի վերափոխությումը.** բանահյուսական նմուշի վերամշակումը իրականացվում է բանահյակարի կողմից: Կարևորելով բովանդակային կողմը, հարազատ մնալով ժողովրդական մտածողությանը՝ յուրաքանչյուր բանահյակար կամաւակամա իր լեզվի և ոճի միջոցով ներազդում է բարբառի վրա: Ու չնպաստ բանահյուսական նմուշները ժողովրդական մտածողությամբ ընդիմանուր մեկ համակարգի մեջ են միավորվում, այնուամենայնիվ փոխադրված յուրաքանչյուր նմուշ նաև բանահյակարի լեզվամտածողության արտահայտությունն է: Գրականացումն էլ այդ արտահայտության՝ բանահյակարի միջամտության լեզվական իրացումն է, նրա

դրսնորման մի ձևը: Բանահավաքի միջամտության (տվյալ դեպքում՝ գրականացմամբ արտահայտված) չափը պայմանավորված է նաև ստեղծագործության ժանրային առանձնահատկությամբ:

Բանահավաքի միջամտության հետ է կապվում գրականացման գործընթացը խթանող մեկ այլ գործոն՝ **տառադարձությունը**. Խոսվածքների համակարգվածության՝ հնչյունական և ձևաբանական առանձնահատկությունների հստակեցման ու ճշգրտման խնդրում այն կարևոր պայման է, որի չզոյթոյնը զգալիորեն նպաստում է գրականացման գործընթացին: Երբեմն էլ **բարբառի չիմացությունն** է դառնում գրականացումը խթանող գործոն:

**3.Գրականացմանը**, գրական լեզվի մատչելիությանը նպաստող հանգամանքներ են **հետատուելելությունը**, **տաղիոն**, **զեղարվեստական** գրականությունը, **հաճախական շփումները** գրականացումը միջավայրի հետ:

**4.Գրականացումը** բարբառի պատմական զարգացման արդյունք է: Այդ գործընթացին նպաստում են ամենից առաջ պատմահետարարական պայմաններ՝ հասարակության պետական ու տնտեսական միամնությունը, տարածքային միասնությունը խիստ սահմանափակում է լեզվի ճյուղավորումները:

**Լեզվական մակարդակներում** գրականացման արտահայտությունների չափը **տարբեր** է: Բանահյուսական նմուշներում խոսվածքների չտարբերակածությունը, ոչ հստակ տառադարձությունը կամ պարզաբն ուրա չզոյթոյնը ակամա հանգեցնում են **հնչյունական համակարգի գրականացմանը**: **Բառային մակարդակում** գրականացումն արտահայտվում է գրական լեզվից մուծված բառերով: **Քերականական կառայցներում** գրականացումը դեռևս տարերային բնույթ ունի, բայց թերականական որոշ կարգերում այն միտվում է օրինաչափության վերածվելու:

## **ԳՐԱԿԱՆ ԼԵԶՎԻ ԱՇԽԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ԴԵՐ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ԲԱՌԱՊԱՇԱՐՈՒՄ**

Տարբեր ժամանակներում տարբեր բանահավաքների կողմից գրառած բանահյուսական ստեղծագործություններում գրական լեզվի ազդեցությունը, գրական բառերի գործածության հաճախականությունը միատեսակ չէ: Են դա պայմանափերված է հիմնականում բանահավաքի անձնական գործոնով, ինչպես նաև բանահյուսական նմուշների գրառման տեղով, պայմաններով: Բացի այդ, բանահյուսության բառապաշտում գրական փոխառությունները գրականացման չափով, կիրառական հաճախականությամբ տարարժեք են և ներկայանում են հետևյալ շերտներով.

**ա)** Գրական բառեր, որոնք թեպետ պահպանում են իրենց գրական երանգը և ժամանակակից լեզվագրացողորոշական բնկալիքում են որպես այդպիսին, բայց ունեն բարրառային գործություն ու արտասանություն:

**բ)** Գրական բառեր, որոնք ունեն բնդգծված գրական բնույթ (գրականաձև) և սահմանափակ գործածություն: Դրանք չեն ծովով բարբառի բառային կազմին և մնում են գրական «օտարաբանությունների» շարքում:

Գրականացումը բարբառի պատմական զարգացման ծնունդը և արդյունքը է, բանահյուսության լեզվի գրականացումը անխուսափելի և օրինաչափ ներկույթ է, այն թափանցել է բանահյուսության լեզվի բառապաշտի շերտը, տարածվել լեզվական բոլոր մակարդակներում և մասնավոր դեպքերից վերածվել գործող օրինաչափության: **Իսկ երբ բարբառը փոխառություն է գրական լեզվի,**

**բանահյուսությունը դադարում է արվեստ ու մշակույթ լինելուց. բարբառը մտածողության համակարգ է, արվեստ ու մշակութային իրողություն, իսկ բարբառային մտածողությունը բանահյուսության գոյության պայմանն է:**

## **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

Արցախի բանահյուսության լեզվի քննությունը հիմք է տալիս աններ հետևյալ եզրակացությունները.

1. Բանահյուսալիքունը անհատական փոխադրությամբ ժառանգորդված ժողովրդական ստեղծագործությունն է, ուստի բանահյուսական նմուշները նախ և առաջ տվյալ ժողովրդի լեզվամտածողության արտահայտություն են և ծառայում են իրեն կարևորագույն արյուր նրա լեզվի (բարբառի) ուսումնասիրության համար: Այդ առումն բանահյուսական նմուշների փոխադրության ժամանակ անհրաժեշտ է տառապարձության պահպանումը, մինչդեռ բանահավաքները ոչ միշտ են հետևողական այդ հարցում: «Նուևանքը լինում է այն, որ բանահյուսական ժառանգությունը գրավիր փոխադրելու պատճառով բարբառագիտական որոշ իրողություններ անտեսվում են, խախտվում են բարբառային, խոսվածքային առանձնահատկությունների պահպանման որոշ օրինաչափություններ, և, փաստորեն, բարբառի համակողմանի ուսումնասիրության համար բանահյուսությունը դառնում է ոչ հոսակի արյուր:
2. Արցախի բանահյուսության հնչյունական համակարգը նույնանում է Ղարաբաղի բարբառի հնչյունական համակարգին, առկա տարբերությունները ոչ միշտ տառապարձման արդյուն են:

3. Բառապաշարի մի շաբթ իրողությունների քննության համար կարևորվում են բառերի ծագումնաբանական ու իմաստաբանական վերլուծությունները:

Բառերն, ըստ ծագումնաբանության, բաժանել ենք **բնիկ բառեր, փոխառություններ, օտարաբառնություններ** մասնաշերտերի:

1. Ըստ մեր հաշվումների՝ բանահյուսության լեզվում հնդիվրապական արմատների թիվը հասնում է մոտ 660-ի: Այդ բառաշերտում բառային մի շաբթ միավորներ վկայած չեն հայերենի գրավիր հուշարձաններում, որոշ միավորների ծագումնաբանությունը նեխադրվում է ավելի հին, քան գրաբարյան ձևերինը, ինչպես նաև առկա են բարբառում անկախ գործածություն չունեցող, բայց բառակազմության մեջ հանդես եկող ու գրաբարյան ձևերից տարբերվող հնդիվրապական արմատներ: Այդ բառաշերտի ուսումնասիրությունը, դրանց համակարգված քննությունը կնպաստի բարբառների կազմակիրման ժամանակաշրջանի հստակեցմանը, գրաբար-բարբառ հարաբերակցության շրջանակների որոշմանը և մեծապես կօժանդակի Արցախի տարածքում վաղնջական շրջանից հայ էճնիկական տարրի գոյության, բնակչության հայալեզու փաստարկի հիմնավորմանը:

2. Արևելյան լեզուներից կատարած փոխառությունները բանահյուսության բառապաշարում մեծ թիվ են կազմում՝ մոտ 3000: Ըստ ուսումնասիրության տվյալների՝ վաղ սերնդի խոսքում դրանք լայն կիրառում ունեն, իսկ նոր սերնդի խոսքում նրանց գործածությունը հետզինտես նվազում է: Ի տարբերություն արևելյան լեզուներից կատարած փոխառությունների՝ բարբառում ուսերեն փոխառությունները անհամենատ թիվ են՝ մոտ 1500, բայց գրեթե 3 անգամ ավելի, քան բանահյուսության լեզվում: Բանահյուսության լեզվում այդ բառաշերտի քննությունը ցույց է տալիս, որ արտաքին միջնորդական փոխառությունների գործածությունը, պայմանավորված արդի գրական հայերենի ներգործությամբ,

սատիճանաբար սահմնափակվում է. ավելի գործուն ու կենսունակ են դառնում ներքին ոչ միջնորդական փոխառությունները:

3.3 Օտարաբանությունները սակավ կիրառություն ունեն բանահյուսության լեզվում, բայց դրանք կարևորվում են տվյալ ժողովրդի լեզվի ու մշակույթի, փոխառությունների հոգնեանության ու աշխարհայացքի ուսումնասիրության տեսակետից:

3.4 Բառապաշարի բառիմաստային քննությունը կատարել ենք՝ մի կողմից՝ առանձնացնելով բառիմաստային որոշ ննջալմբեր, որոնք դրսմբում են իմաստափոխական հետաքրքիր իրողություններ և բնութագրում են բանահյուսության լեզվի բառապաշարի իմաստափոխական տեղաշարժները, մյուս կողմից՝ քննել ենք հաճախական կիրառություն ունեցող փոխադարձ-մայրենի միավոր համադրությամբ հոմանշային մի շարք զույգեր, որոնք ցոյց են տալիս բառապաշարի իմաստաբանական համակարգի զարգացման ընթացքը:

4. Թերականական կառուցվածքում թե՛ ձևաբանական և թե՛ շարահյուսական մակարդակներում դրսորվող առանձնահատկությունները մեծապես պայմանափոխված են բարբառի՝ արդի զրական հայերենի հետ ունեցած առնչություններով ու նաև բանահյուսական ստեղծագործությունների ժամրային յուրահատկություններով:

5. Լեզվի պատկերափորման և արտահայտչական միջոցները, լեզվական տարրեր մակարդակների ոճական հնարավորությունները բանահյուսության լեզվում հմտորեն զուգորդվել ու կիրառվել են: Դրսորվող ոճական շատ իրողություններ ստեղծագործությունների ժամրային առանձնահատկությամբ են պայմանափոխվում. այս կամ այն ոճական հնարանի ընտրությունը միտված է ստեղծագործությունների ժամրային նկարագրի բացահայտմանը և համբես է զայխ իրեն տվյալ ժամրի կառուցվածքային հասկանիշ:

6. Գրական լեզվի ազդեցությունը մշտապես առկա է բարբառի, բանահյուսության լեզվի վրա: Այդ ազդեցության շրջանակների ընդգրկուն կամ սահմանափակ լինելը սոցիալ-պատմական պայմաններով է թենադրվում: Գրական լեզուն ներազրում ու աստիճանաբար սահմանափակում է բարբառների զարգացման հնարավորությունները և նպաստում նրանց զրականացմանը:

- Ատենախոսության թեմայով իրատարակվել են հետևյալ աշխատանքները.
1. Լեզվական անձշտություններն ու աղավադումները արցախյան ժողովրդական խաղիկներում, Լեզվի և զրականության զարգացման հիմնախնդիրներ, Ստենֆանակերտ, 2004, էջ 86-90:
  2. Ղարաբաղի բարբառի հնչյունական համակարգի արտահայտությունը Արցախի բանահյուսության մեջ, ԱրՊՀ Գիտական տեղեկագիր, 2005, հ.10(հավելված), էջ 64-67:
  3. Գրականացման՝ որպես լեզվական իրողության արժեքը բանահյուսության մեջ, «Ազգ և ժառանգություն» համահայկական նիրտասարդական գիտաժողովի գնեւումներ, Ստենֆանակերտ, 2006, էջ 154-161:
  4. Շաղկապների գործածության առանձնահատկությունները Արցախի բանահյուսության լեզվում, «Մնարով Մաշտոց» համալսարանի լրատու, 2007, էջ 138-147:
  5. Եղանականիշ բառերի իմաստային ու գործառական ուսնանահատկությունները Արցախի բանահյուսության լեզվում, «Մնարով Մաշտոց» համալսարանի 10-ամյա գործունեությանն ու Ծուշիի ազատազրման 15-րդ տարենարձին

նվիրված միջազգային գիտաժողովի հիմնադրույթներ, Ստեփանակերտ, 2007,  
էջ 67-68:

## МАРКАРЯН ЛУСИНЭ ГЕОРГИЕВНА ЯЗЫК АРЦАХСКОГО ФОЛЬКЛОРА

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук  
по специальности 10.02.01 “Армянский язык”

Защита диссертации состоится 25 апреля 2008г, по адресу 0015, Ереван,  
ул. Г. Лусаворича 15, в специализированном совете 019 Института языка им.  
Р. Ачаряна НАН РА

### РЕЗЮМЕ

Диссертационная работа посвящена арцахскому фольклору. Работа состоит из  
введения, четырех глав, заключения и приложений.

**Во введении** обосновывается актуальность темы, её теоретическая и  
практическая значимость. Предлагается фактический материал исследования, а  
также определяются цели и задачи работы. Введение включает в себя также  
краткий обзор особенностей исторического процесса письменного описания  
арцахского фольклора, общей характеристики фольклорных жанров и записи  
фольклорных образцов.

**В первой главе** представляется различие фонетических систем в диалекте и  
фольклоре, и причины обуславливающие их. Проведён анализ словарного состава,  
путём его разделения на этимологические и семантические группы. Соответственно выделены некоторые подгруппы, анализ которых позволил нам  
обнаружить лексическую и семантическую ценность слов, входящих в эти  
группы.

**В второй главе** проведён анализ грамматической структуры, путём  
сопоставления литературного языка и языка фольклора, и были выявлены  
сфера влияния литературного языка. Также представлены некоторые  
статистические данные, которые отражают особенности грамматической  
структуре фольклорных произведений.

**В третьей главе** рассматриваются стилистические особенности различных  
жанров, выявляя в них особенности применения стилистических приемов.

**В четвертой главе** кратко представлены слова, заимствованные из  
литературного языка, проявляющиеся на всех языковых уровнях. Также  
дается языковая оценка этой лексической группы, определяются факторы  
условия и причины содействующие этому процессу.

**В заключении** обобщены основные результаты работы, систематизированы и  
оформлены важнейшие аспекты.